

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

35-րդ ՏԱՐԻ

1886 ՓԵՏՐՈՒԱՐ 15

ԹԻԻ 3809

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 15 ՓԵՏՐՈՒԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Շար. 3805 Թուէն)

Այժմ աչքէ անցունենք անգլիական միւս գլխաւոր թերթերու վրայ գրուածները : Տէյլթ Թէլէգրաֆ կամ Տէյլթ Լէյթ, ինչպէս կը յորջորջեն զայն ընտանեաւոր, Թայֆէն ետքը կամ անոր հետ ամենէն կարեւոր լրագիրն է, ծանուցումներու կողմանէ ամենէն հարուստը եւ մեծ թերթերու ամենէն շատ տարածուածը : Խմբագիրները շատ խնամով ընտրած է, եւ այս թերթին է որ ծանօթացուց զձ. Օկըսթըս Սալա, ամէնէն աւելի ժողովրդական եւ սկզբնականութիւն ունեցող լրագրապետը : Տէյլթ Թէլէգրաֆն էր որ Սթանլին Ամերիկա զրկեց ըննութեան համար, և ձ. Սմիթ հնախոյզը Միջագետք և Ասորեստան, ուստից հրաշալիքներ բերաւ, Ջոհնզոյի ասորական զարմանալի մի պատմութեան հետ :

Նշանակելու արժանի դէպք մ'է այս թերթին Պ. Լըվի և Պ. Լօսընի ստացուածք լինելը : Այս անձինք կորսուած համարուող պահանջքի մը փոխան ընդունեցան այդ լրագիրը եւ այսօր իրենց հարստութեան ամենամեծ մասը անոր կը պարտին եւ եղած են միլիոնատէր : Յառաջագոյն ազատական էր

Տէյլթ Թէլէգրաֆ . հիմա պահպանողական եղած է գոյն մը պահելով ազատականութենէ : Մեծ կարեւորութիւն ունեցող լրագիր մ'է սա, լաւ տեղեակ լուրերու, խոհեմ, իւր կարծիքները լուրջ եւ բանաւոր, ազդեցութիւնը մեծ :

Սթանֆորդ երբեմն բողոքականութեան ախոյեանը, Գահու եւ սահմանադրութեան նեցուկը, երկար ատեն պահպանողականաց արձագանքն, Լօրտ Տէրպլիներու եւ Տիւրանթիներու գաղափարաց անդրադարձումն էր, բայց յորմէ հետէ մամուլն ազատ եղած է եւ Պ. Մըտֆօրթ կը վարէ զայն՝ Սթանֆորդ անկախ պահպանողական եղաւ : Այնքան աններող են «Թօրիներն» որ կ'ամբաստանեն այս թերթը իբրեւ դաւաճանող իւր ազատ վարդապետութեանց : Թէլէգրաֆի նման կարեւոր և առաջնակարգ թերթ մ'է Սթանֆորդ և անոնք որ քաղաքականութեամբ կ'զբաղին՝ պէտք է կարդան այս թերթին որ շատ լաւ կ'իմաստասիրէ խնդիրները : Անգլիոյ մէջ եթէ օրագիր մը կ'ուզէ որ բնաւ ընթերցող չունենայ, բաւ է որ անկախ չըլլալը իմացուի : անցած են այն ժամանակներն ուր Բիթ կը գնէր Գոուէն, փորձ կը փորձէր բայց ի զուր՝ Թայֆը գնելու եւ կը հիմնէր Սքէ լրագիրը իւր քաղաքականութեան ծառայեցնելու համար :

Տէյլթ Նիւզ Կլատսթընի ազատականութեան գործիքն է, բայց երբ սխալ մը գործէր անկեալ նախարարութիւնը, Տէյլթ Նիւզէր վարաներ վրան յարձակելու : Ֆրանգո-Գերմանական պատերազմէն ի վեր այս թերթին կարեւորութիւնն աւելցաւ : Պ. Լապուլէզ և Փարիզի պաշարման ատեն այնպիսի լաւ թղթակցութիւններ յղեց որ Տէյլթ Նիւզի յաջողութիւնը կատարեալ ըրին : Ա-

զատական թերթերու ամէնէն նշանաւորն է Տէյլէ Նէ-ը :

Մօնթէնի Բօթ մեծամեծներու , բարձր դասուն օրագիրն է . տնօրէնն է Սըր Էլ-ճըրն Պօրթվիլը , մեծահամբաւ գրագէտ , հռետոր եւ երեսփոխան : Լօրտ Բալմէրսթըն եւ Նաբօլէօն Գ. ի գործիքն էր սա երբեմն , որմէ կը հասկցուէր թէ այս երկու մարդիկ համաձայնած էին իրարու հետ : 1772 ին հրատարակուիլ սկսած է եւ Լօնտրայի ամենէն հին թերթն է Մօնթէնի Բօթ . թէ եւ գահուն , եկեղեցւոյն , ստացուածոց եւ աղնուապետութեան պաշտպան է յաւէտ , այլ տակաւ կը պահէ իւր անկախութիւնն : Դեսպանագիրտական գործերուն տեղեակ է միշտ :

Բալ Մալ Կալէթ իբրեւ երեկոյեան լրագիր հրատարակուիլ սկսած է : Նախ պահպանողական էր , բայց երբ ուղղութիւնը Պ. Սըրլէյի անցաւ , արմատական թերթ մ'եղաւ , որով շատ ընթերցողներ կորոյս , բայց յետոյ շատ աւելի թուով ընթերցողներ գտնուեցան . այսօր արմատական ամենակարեւոր թերթն է . Ֆէլիքսները կը գրեն զայն եւ Ֆէլիքսները կը կարդան . տնօրէնը ձօն Սըրլէյ , Խորհրդարանի անդամ , Անգլիոյ համակրելի անձնականութիւններէն մին է . լրագրութեան լոյսն եւ պատիւը կը նկատուի միանգամայն :

Սէն Ճէյմս Կալէթ պատուական թերթ մ'է քննադատութեան , քաղաքական եւ ընկերական իրաց . ասոր կը վերագրեն Հընդկաստանի գործոց վրայ յառաջ քան զամէնն ուշադրութիւն գրաւած ըլլալու արժանիքը :

Լօնտրա ունի նաեւ երեկոյեան թերթեր , Էթօ Կլեթ Էթ , բայց աղմկայոյզ լուրեր կուտան որք հետեւեալ օրը կը հերքուին կարեւոր թերթերու միջոցաւ : Լոյս աղատ , համարձակ թերթ մ'է գիւրագին , լրագրութեան ուղեյորդ , որ Փարիզի Բըլէ ժուռնալը կը յիշեցնէ . ինք կը շինէ իւր թուղթն ու մեկնը ինչպէս Տէյլէ Թէլէգրաֆ եւ առաջնակարգ թերթերուն շատերը կ'ընեն , Հարկ չկայ յիշատակելու հարիւրաւոր ուրիշ օրագիրներ , բայց կ'արժէ նշանակել շահեկանութիւն ունեցող մի քանի թերթ ինչպէս Թրէլէն , Բէթլէ , Բայնալ , Սընթէյ Թայն , Ռօբլ , Նէյնըլ Բէթլէ Պրատ-

լոյի կուսակից : Կան անթիւ հրատարակութիւնք ընկերական եւ արհեստական իրաց համար : Լօնտրա ալ ունի Ֆէլաթ մը շատ լաւ պատրաստուած եւ ակործելի օրագիր , Սըր Չէրլզ Տիքի Ալէքսէօնը . զարմանալի է որ այս մարդ միտքը բազմաթիւ խնդիրներով ծանրաբեռնեալ կրնայ տակաւին արտադրել պատուական գրուածներ . իւր խորին հմտութիւնը կը միանայ կատարեալ համատուրեան մը հետ եւ խօսակցութիւնը այնքան յանկուցիչ է որքան պարզ : Ուրիշ թերթ մը կայ՝ Թէլ-Պէլ հանճարաբան զաւեշտական գրուածներով դրօսեցուցիչ : Սէյ 24 էջ լուր կուտայ 20 սանթիմի . թատրոններու օրագիրն է այս , ուղիղ տեսութիւններ , քննադատութիւններ կ'ընէ : Էթփորձեց արժանաւոր արուեստագէտները պատրաստելով իրեն համբաւ մը շինել , բայց ինկաւ : Պէթը է մոռնալ պատկերազարդ զաւեշտականներ . Բըն , Ճըթթի , Ֆըն , Ֆընի Ֆօթ Էթ : Բըն կը պարծի որ երեսուն տարիէ ի վեր Կալաուիի պէս գրծագրիչ մը ունի , զՏիւ Մօռիէ , այժմ գրեթէ կուրցած : Վալէթի Ֆայր , երգիծական աշխարհիկ օրագիրներուն լաւագոյնն է եւ ամէն շաբթու մէջ օրուան երեւելի անձանց միոյն ծաղրանկարը կուտայ : Մաղրանկարները՝ իբրեւ գծագրութիւն , նմանութիւն եւ իմաստ , մէն մի հրաշակերտներ կը համարուին : Խմբագիրը Պուլս Jehu junior ստորագրութեամբ նշանաւոր յօդուածներ կը գրէ այս թերթի մէջ որ բարձր դասերու համար ամենազուարճալի թերթն է յԱնգլիա :

Հանդէսներու գլխաւորներն են Էթթի-Պէլէթ , Բաթլէթ , Բընթէթթի , Ռէթթի-Էթթի , Նայթի-Էթթի Սէնթի , Ֆրէնչի-Էթթի կը վարէ մեծահամբաւ հրատարակիչն Էթթի . մեծ եւ աղիւ գործիք հրատարակութեան բոլոր աշխարհի ծանօթ են այս հանդէսները : Սալթի-Էթթի կատարեալ անկախութեան օրինակը կուտայ . Թայնի նման սա եւս կը վտարէ խմբագրութենէն որ եւ իցէ կուսակցութեան մարդիկ : Տնօրէնը քսանի չափ օժանդակ խումբագիրներ ունի որք համալսարանաց , քըլլերու եւ գրականութեան ծաղիկներն են : Կարեւորութեան մասին այս հանդէսը Թայնըն անմիջապէս ետքը կուգայ : Օքսֆոր-

տի, Գէմրիճի, Թէմբի, Լինքօլս Իննի, Էկեղեցւոյ եւ սեռութեան լաւագոյն գրիչները իւրն են: Սքէտթեթըը ահաւոր ոսոխ մ'է անոր դէմ, բայց արմատական իմաստասէրները կը ներկայացունեն: Վերջապէս Լօնտրա 60 տեղական թերթեր եւ բաղմաթիւ Մօնիթօրներ կան:

Անգլիական լրագիրները թերթօն չունին. հեռագրի գիւտէն յառաջ օրագիրներու միջեւ գլխաւոր բան մ'էր Հնդկաստանի լուրերը կանխագոյն հաղորդելու մրցումը: Բայց հեռագիրներն եւ երկաթուղիք հաստատուելէ ետեւ անգլիացի ընթերցողաց պահանջումները գոհ եղան. յատուկ թիւ մը ամիսը 1,000 Փրանքի ծախք մ'է օրագիրներու համար, որք մի շիլլինով 100 բաւ հեռագրելու իրաւունք ունին: Լօնտրայի լրագիրները նահանգական թերթերու հետ մրցելու համար ալ իրենց մէջ դաշնակցեցան եւ մասնաւոր կառավարներ վարձած են որոնք ամէն առաւօտ ժամ 3 ին լրագիրները երկրին ամէն կողմը կը տարածեն: Պէտք է յարել թէ Լօնտոնի մամուլը մեծամեծ գործակալութիւններ ունի, ինչպէս Սէնթրալ Նիւսթիքսը եւ միւսը Բլեյք Էսթիմէյշըն, Reutersի հեռագրական գործակալութիւնը:

Ֆլէթ Սթրէթ՝ Լօնտրայի գլխաւոր պողոտաներէն մին է, եւ հոն մէն մի տան մէջ մի կամ աւելի թերթերու գրասենեակները կան: Բաւ Մալ ըլլապէս փողոցն է. ասոնք երկու կեդրոններ են ուստից կը մեկնին երկիրը՝ շարժող խնացականութեան թիւերը. կրնանք ըսել թէ Անգլիոյ «Նիւսթ» այդ երկու կեդրոններու մէջն է: Լրագրութիւնը որքան ալ յարգի ըլլայ Անգլիոյ մէջ տակաւին մարդոց առջեւ դուռ մը չի բանար. լրագրապետութենէ Խորհրդարան անցնող չըլլար: Խորհրդարանի մէջ նստող լրագրապետք իրենց գրչին չէ որ կը պարտին այդ գիրքը: Լրագրապետք անանուն եւ անծանօթ կը մնան եւ երբէք յայտնի պայքարներու չեն խառնուիր. իրենց չուք անձնական չէ այլ հանրական տեսակէտով միայն կարեւորութիւն ունի եւ եթէ ի բաց առնուին այն անձինք որք լաւագոյն թերթերու սեփականութիւնն ունին՝ լրագրութիւնը հարստութեան ճանբայ չէ: Լրագիրները դատելու համար պէտք է ճանչնել անոնց խաբադները. բայց Անգլիոյ մէջ

ճանչնել եւ որոշել զայնս կարելի չէ: Միքանի նշանաւոր գրիչներ աշխարհածանօթ են. նմանապէս կան հարիւրաւոր գրիչներ որք լրագրութեանը փայլ կուտան բայց երբէք չեն տորագրեր եւ բնաւին անծանօթ մնացած են ընթերցողաց:

Լօնտրայի մամուլն ամէնէն ժողովրդական դէմքն է Պ. Օկլսթըս Սալա: Այս մարդը Փորթուկեցի ազնուականի մը որդի է եւ մայրն է Տէմէռաւա՝ հոչակաւոր երգիչ անգլուհին: Իւր ուսումն առած էր Պուրպօնի վարժարանը, Աղքստնդր Տիւմայի որդւոյն հետ, ու յետոյ Լօնտրա գընաց կատարելագործելու համար: Հոն յաջորդաբար ներկայացաւ իբրեւ հեղինակ, դերասան, գծագրիչ, փորագրիչ, ուսուցիչ, ատենախօս, բանախօս, ծաղրանկարիչ, օգաչու եւ մնջկատակներու հեղինակ: Աշխատաւոր, գործունեայ, ճարպիկ, ամէն բանի ձեռնհաս թէեւ, բայց այս մարդը իւր տաղանդներէն բնաւ չկրցաւ օգտիլ. ուստի մինչեւ երեսուներորդ տարին բան մը չեղաւ: Տէյնթ Թէլէգրաֆ գտաւ զայն վերջապէս եւ իրեն թղթակից ըրաւ. հետեւեալ օրը Սալայի համբաւն ու բաղդը շինուեր էր: Այս մարդուն համար կ'ըսեն թէ աշխարհիս հրապարակագիրներուն ամէնէն կտրուկը, ամէնէն հանձարեղն ու ամէնէն զուարճալին է: Երբեմն ճշդութիւն կը պակսի գրածներուն մէջ քանզի մի. եւ եթէ ակնարկով կը դատէ ամենայն ինչ. բայց տեսածներն այնքան կենդանի գոյներով կը նկարագրէ որ շատ սովորական բաներն անգամ չահեկանութիւն մը կ'ստանան իւր գրչին ներքեւ: Իւր միակ թերթութիւնն է չափազանց դիւրագրագոութիւնը: Իւր անվիճելի տաղանդին արժանիքը պէտք էր սակայն զգալ եւ արհամարհել ամէն յարձակումներ: Եթէ ի բաց հանուի այս թերթեւ պակասութիւնը կը մնայ անդին սիրուն եւ ախորժալի մարդ մը մեծ խելքի եւ մեծ սրտի տէր: Սքանչելի գիրք մը գրած է Ամերիկայի գերեջինը պատերազմին վրայ: ՅՅ ամեայ մարդ մ'է Սալա եւ Ատօնիսի հետ բնաւ նմանութիւն չունի: Երբ ճանապարհորդէ կարծես թէ իշխան մ'է, դեսպան մ'է սա, եւ կը հասկցուի թէ որքան առատ են իւր լրագրին աղբիւրները: Բայց բոլոր աշխարհիս վրայ եթէ կայ մի զարմանալի

եւ արտասովոր մարդ լրագրութեան ծառայող դա միայն Արշիպալտ Ֆորպս է։ Առաջին անգամ գինըը տեսնողը գերմանացի սպայ մը կը կարծէ։ սպիտակ գլխարկ, ըսպիտակ տաբատ ու պարեգօտ, բարձր կօշիկներ, ուսէն առ ի շեղ կախուած մախաղ մը, հզօր զուգադիտակ մը եւ գօտիէն անցնող ծխափոխ մը, ահաւասիկ իւր հազուստը կապուստը՝ գինուորի գլուխ մը ունի, թանձր ընչացք եւ կորովի որքան բարի դէմք մը։ Հայրը սկովմացի մի երէց է, այլ ինքն շատ արկածախնդիր՝ նախ մտաւ բանակի ծառայութեան մէջ ուր գրեց գինուորական կենցաղոյն հետաքրքրական տեսարանները, յետոյ թողուց այդ ասպարէզը եւ լրագրութեան մէջ մտաւ։ Իբրեւ Տէյլ Նէլի թղթակից մանաւանդ շատ հոշակաւոր եղած է։ Զինուորական բանբերի կատարեալ էտիալն է այս մարդը։ Անհնարին գործունէութիւն մը ունի, երկաթէ կազմուածք մը եւ պողպատեայ գոգցես ջըբեր։ Խոնջութիւն իրեն անծանօթ է, ձիուն թամբին վրայէն բազմութիւ սիւններու նիւթ մատակարարած է եւ այս գրուածները դասական հատուածներու տեղ կ'անցնին։ Զիարչաւ կ'անցնի տարածութիւններն եւ շատ ձիեր սպաննած է նամակ մը կամ հեռագիր մը վաղ քան զամէն իւր լրագրին հասցունելու համար։ Գիտէ թէ ուր պէտք է գտնուիլ. ինչ որ պիտի պատահի կը նախագուշակէ. ռազմագէտ ըլլալով պատերազմի մը ամբողջ կարգադրութիւնները մի նայուածքով կը տեսնէ։ Ամբողջ օրեր կ'անցունէ ասպանդակներուն վրայ կեցած, վառօդի մէջ սեւցած, ցեխի մէջ թաթախեալ, շատ անգամ կը մոռնայ սնունդ առնել եւ դիւցազնական խանդով մը ռգեւորեալ ամէն բանի ուշադրութիւն կ'ընէ իբրեւ մի զօրապետ եւ կը գրէ տեղեկագրութիւններ որմէ աւելի կատարեալ չեն սպայակոյտինը բայց տակաւ իրենները աւելի կենդանի են, աւելի սըրտաշարժ բան թէ վիպասանի մը գրածները։ Այս աննման գրագէտը, այս տիեզերահոշակ մարդն իւր կենաց փոթորիկներուն մէջ մտացածին պատմութիւններու բեռ մը ունի։ Հնդկական սովը աեսաւ, Ասլէսի իշխանին հետ Հնդկաստան ուղեւորեցաւ, Գարլիսդներու պատերազմին եւ սերպիական պատերազմին հանդիսատես ե-

ղաւ։ Ինքն էր Աշանթիներու եւ Զուլուններու պատերազմին յատակագիծը տուողը, այնքան ճարտար եւ իմաստուն կերպով գրծուած էր այդ գործը որ զօրապետներն լրուութեամբ ընդունեցին եւ գործադրեցին։

Բլէյնայէն Շիշթով մի ձիարչաւ ըրաւ որպէս զի Բլէյնայի պատերազմին նկարագրութիւնը յղէ Եւրոպա. Շիշթով մտաւ հետիոտն, գլխուն վրայ երրորդ ձիուն թամբը միայն կար։ Մի ուրիշ սոսկալի ձիարչաւ ըրաւ յետոյ եւ ուսական թղթատարներէն Յ ժամ յառաջ Շիւրգայի անկումը Զարին ծանոյց։ Պահ մը Լօնտրա երեւցաւ ձեռքը լուրերով լցուած, եւ իսկոյն առանց իւր տունը մտնելու, առանց կոշիկները ոտքէն հանելու մեկնեցաւ։ Իւր անհնարին եւ գերմարդկային ջանքերն ու ճարպիկութիւններն որով ամէնէն յառաջ կը յղէր իւր լուրերը, պատերազմներու մէջ ցոյց տուած յանդգնութիւնները դիւցազններու կարգը դասել տուած են այս մարդը, որ Տէյլ Նէլի բաղդն ու փառքը շինեց։ Շատ չի բնակիր Լօնտրայի մէջ. այրի մ'է Ֆորպս եւ երկու սիրուն օրիորդներու հայր։ Յաւէտ պատրաստ առաջին նշանը տրուելուն մեկնելու, իւր պայուսակը միշտ սնդուած կազմ ու պատրաստ կը կենայ. երկու հանդերձանք պատրաստած ունի, մին ցուրտ երկիրներու միւսը տաք երկիրներու ճանբորդութեան համար։ Դրամ, յանձնարարագիր, անցագրեր, ուղեցոյց գրքեր, ծանօթագրութիւններ, գէնքեր, բան մը չը պակսիր իրեն. չգիտեր թէ մէկ ժամու մէջ Աֆղանիստան թէ Բարեյուսոյ Գլուխը երթալու համար շոյեկառք պիտի մտնէ։ Վայրենի եւ աննկուն կորովով այս մարդը հոգւով եւ մարմնով տիրոջ մը կը ծառայէ ստրկաբար, եւ այդ տէրն է «պաշտօնին պարտաւորութիւնը»։

Հրապարակագիրներու մէջ յիշատակութեան արժանի են նա եւ Բլէյն լրագրին տնօրէնը Պ. Պլունան, բեղմնաւոր գրիչ, հեղինակ բազմութիւ գաւեշտներու, որոցմէ զատ ունի թարգմանած այլեայլ խաղեր Փըրանտերէնէ։ Այս մարդը երբեմն քահանայութեան սահմանուած էր. համոզեալ կոթովիկ մ'է, զուարթ, տաղանդաւոր, յամառ, աշխատասէր, եւ 12 զաւակ ունի։ Պ. Էտմոն Եաթս, Ուոլթի հիմնադիրը. Թը-

բնական տնօրէն Պ. Լապուշեւ . տարօրինակ մարդ . մ'ալ այս որ մինչդեռ բազումք լաւ բան զոր ենն կամին երեւիլ . սա սոսկալի գաղափար մը տալ կ'ուզէ իւր վրայով : Ընկերութենէ դուրս առելի է բայց ակումբներու մէջ հիանալի ամէնուն . խօսակցութիւնը վերին աստիճանի յանկուցիչ , փայլուն եւ ախորժելի : Նախ դեսպանագիրտութեան մէջ սկսաւ իւր քաղաքական կեանքը , յետոյ լրագրական ասպարէզը ընտրեց : Լրագիրներու թատրոններու տեսուչ էր ատեն մը . Խորհրդարանի անդամ է , եւ կատարեալ Յօրնադի մը տեղը կը բռնէ . սաստիկ կը վախճան իւր երգիծական լեզուէն : Մեծ գործերու մէջ մտած է , դրամական եւ ճարտարագիտական :

Պէտք չէ մոռնալ զՊ. Ռայթէր . 1849ին սա մի գործակալութիւն հաստատեց Էքս լա Շաբէլ . 1851 ին Լօնտրա անցաւ , առաջին ընդժողկայ հեռագրական թելը դրուէն անմիջապէս ետքը : Իր առաջին յաջողութիւնն այն օրէն սկսաւ երբ Նաբօլէօն Գ. ճառ մը խօսեցաւ ի Փարիզ՝ իբրեւ նախերգանք իտալական պատերազմին . ժամ մը ետքը ճառը հեռագրուած էր Լօնտրա : Բոլոր աշխարհի լուրերուն մենավաճառը իւր ձեռքն է եւ ոչ ոք կարող է իւր հետ մրցիլ : Ամէնէն փոքր քաղաքներու մէջ անգամ գործակալներ ունի որք ընդ միշտ յարաբերութեան մէջ են պաշտօնէից , սեղանաւորաց , կառավարիչներու հետ եւ :

Այս մարդը , ոյր ձեռքն են բոլոր Եւրոպիոյ հեռագրական թելերը , որ ամէնէն կանուխ կ'ստանայ բոլոր քաղաքական և դրամական խնդրոց վերաբերող լուրերը , կը հաւատեն թէ երբէք անձնական շահուն չէ ուզած գործածել իւր հզօր գործակալութիւնը : Ֆրանքօ - Բրուսիական պատերազմի ժամանակ Պէրլին իրմէ կ'ստանար դերմանական զինուց յաջողութեան լուրերը : Պ. Ռայթէր անգլիական հպատակութիւն ընդունած եւ Պարոնութեան տիրութեան ստացած Գերմանացի մ'է , իբր հարուստ մեծ ազդեցութեան տէր : Իւր սրահը Լօնտրայի փայլուն սրահներէն մին ըլլալով ընկերութեան բարձր դասը միշտ կը յաճախէ հոն :

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍ

ԿԵՍ ԴԱՐ ԱՌԱՋ ԵՒ ԱՅԺՄ

Դ.

Յոյժ կարճաւոտ տեսութիւն մ'եւս արժան է ընել Թիֆլիսի հայ գրագէտներու վրայ : Ի Գերմանիա այսօր կան հարիւրաւոր հայ ուսանողներ : Բնական է ենթադրել թէ նոքա պարբերաբար վերադառնալով Թիֆլիս տեղական Հայոց գրականութեան մէջ կը հաստատեն գերմանական կրթական ուղղութիւնն որ այժմ ամենայարգին է աշխարհիս վրայ : Շնորհիւ այդ դրական դպրոցին Կաւկասիոյ հայ գրականութիւնն մեծ յեղափոխութիւն կրած է : Այժմ ունինք նշանաւոր եւ արդիւնաբեր գրագէտներ :

Գրագէտներու առաջին շարքի գլխին կը փայլի Ռափայէլ Պատկանեան (Քամառ Քաթիպա) որպէս ընտրելագոյն բանաստեղծ և ընտիր վիպասան : Նորա երգերը լի են բուռն ոգեւորութեամբ եւ այս պատճառաւ Կաւկասիոյ մէջ , ամեն ուրեք , ե'ւ տգէտ գիւղացին ե'ւ ուսումնականն , ե'ւ դպրոցի փոքրիկ մանուկն եւ տարէց մարդն բերան գիտեն գրեթէ նորա բոլոր ոտանաւորները . նա վիպասանութեան մէջ ունի ոչ նուազ բարձր տաղանդ . ով կարդացած է նորա Տէկէ եւ Նաթէշի վիպակն , հիացեր է այդ գործի վրայ , այնչա'ի ոգեւորութիւն , կեանքի այնչա'ի տարբեր եւ նորանոր երեւոյթներ ու պատկերներ ունի իւր մէջ : Տէկէ եւ Նաթէշի արժանապէս գնահատելու եւ նորա բուն ոգւոյն մէջ թափանցելու համար ընթերցողն պէտք է կա'մ Ռուսիոյ Հայ լինի կա'մ Ռուսիոյ Հայոց կեանքին լաւապէս տեղեակ անձ մը :

Պ. Պատկանեանի գլխաւոր ոտանաւորներն թարգմանուած են գերմաներէն . մօտերս գիտնական գերմանացի մը յօդուածի մը մէջ (Սթաթիստիկ հրատարակեց այդ յօդուածի թարգմանութիւնը) մեծ գովու-

թեամբ կը յիշատակէր Պատկանեանի ոտանաւորներն, մանաւանդ Վարդանի ծառնդարձակ երգը :

Այս տարի պիտի լրանայ Ռ. Պատկանեանի քսանհինգամեայ գործունէութիւնն. այս ամիս Արշակունի, մի երկու շաբաթ առաջ, հրաւէր կարդաց Կաւկասիոյ եւ ամբողջ Ռուսիոյ Հայոց հանդիսաւոր կերպիւ կատարելու հայկական մեծ բանաստեղծի յորեւեանը :

Ոչ նուազ ժողովրդականութիւն կը վայելէ Բաֆֆի, ոյր վէպերն ահագին յեղափոխութիւն յառաջ բերած են Կաւկասիոյ եւ Ռուսիոյ Հայոց ազգային զգացման մէջ, դէպի բարեշրջում :

Պ. Բաֆֆի—Յակոբ Մելիք—Յակոբեան—բնիկ Պարսկաստանի Սաւրի գիւղէն է, բարձր ուսում ստացած չունի եւ ելած է Գիմնազիայի չորրորդ դասարանէն. տակաւին իւր երիտասարդութեան ժամանակ հայրը հարուստ վաճառական մ'էր որ յետոյ մնանկացաւ : Բնական է կարծել թէ երբեմն այսպիսի դիրք ունեցող գրագէտ մը կամ մարդըն ընդհանրապէս վատ գործիչ կը լինի : Եւ Բաֆֆի թէեւ մօտ 28 տարի է որ կը գրէ, սակայն չէր իրաւունք ասպարէզի վրայ գուցէ վերոյիշեալ պատճառաւ : Ուսուցչութեամբ կ'ըստեղծէր երբեմն Պարսկաստանի մէջ եւ երբեմն Ռուսաստանի : Բաֆֆիի մտաց առաջին ծնունդն է ոտանաւոր բանաստեղծութիւն մը որ սահուն եւ տխրագրեցիկ ոճով կը նկարագրէ պանդուխտ Մըլեցիի կեանքը :

1870էն սկսաւ երեւիլ գրական ասպարէզի վրայ : Այդ թուականէն 3-4 տարի յետոյ հրատարակել տուաւ Փռնջերու երկու հատորներն. մին կը պարունակէ այլ եւ այլ ոտանաւորներ, իսկ միւսն կեանքի պատկերներ, որոց մէջ նշանաւոր է Հաբէժը, որ իւր տեսակի մէջ առաջին կարգի գրուած մ'է : Իւր փունջերով Բաֆֆի կը պատկերէ Թիֆլիսի հայ աղնուականութեան յոռի յատկութիւններն, նոցա հայատեցութիւնն եւ ռուսամոլութիւնը : Այս «Կեանքի պատկերներու» պատճառաւ ունեցաւ շատ ոխերիմ թշնամիներ աղնուական դասէն եւ մի հայ աղնուական Ռաֆայէլ Միսնյանի նորապէս կ'ամար Բաֆֆիի երդուեալ թշնամին դարձաւ, այնպէս որ ոճրագործութեան գաղա-

փար իսկ յղացաւ : 1880 էն քիչ առաջ եւ յետոյ Բաֆֆի իւր փառաց գաղաթնակէտի վրայ կը գտնուէր : Այդ միջոցին իրարու ետեւէ Մշակի մէջ հրատարակուեցան նորա Խենիք, Ջաւադ-բէն, Կայծերը, Դաւիթ-Բեգը, Խաճապի Մելիք-Միսնյանը, Ռիթա-Ղազը, Խաչապուռ, որ իրենց հետաքրքրաշարժ բովանդակութեամբ մեծ ոգեւորութիւն կը պատճառէին հասարակութեան մէջ : Ամեն մարդ անհամբեր կ'սպասէ Մշակի նոյն օրուան համարի ստանալուն : Ի նկատ ունենալով այն ահագին ազդեցութիւնն զոր կ'ընէին Բաֆֆիի վէպերն, կարելի է ըսել թէ Մշակ իւր մեծ հեղինակութիւնն ստացաւ Բաֆֆիով մասամբ, բայց մոռնալու չէ որ Բաֆֆի եւս իւր բարձր հեղինակութիւնն ստացաւ շնորհիւ Մշակի, որովհետեւ Գ. Արծրունի ընծայեց նա զերեւել համար առաջին միջոց, առանց այս նիւթական եւ բարոյական քաջաբերութեան, թերեւս Բաֆֆի չ'հասներ այն բարձր զիրքին զոր գրուած ունի ամբողջ Ռուսիոյ Հայոց սրտին մէջ : Երկու տարի առաջ մեծ պատրաստութիւններ կը լինէին Բաֆֆիի քսանհինգ ամեայ յորեւեանը կատարելու համար : Արդէն բաղնաթիւ քաղաքներէ եւ զիւղաքաղաքներէ հարիւրաւոր ուսուցիչներ եւ այլ թանկագին նուէրներ կը զրկուէին նորա յորեւեանի ամիսը, երբ յանկարծ կառավարութիւնն յայտարարեց թէ բարձրագոյն հրամանաւ արգիլեալ է Բաֆֆիի յորեւեանի կատարումն, որովհետեւ այդ ձեռնարկ կը նշանակէր քաջաբերել նորա գործունէութիւնն եւ սկզբունքըն, իսկ այս անհամապատասխան կը նշկատուէր Ռուսիոյ քաղաքական ուղղութեան :

Իբր մանկական վիպասան նշանաւոր է Ղազարոս Աղայեան, Վրաստանի եւ Իմերէթի հայկական գաղութներու թեմական տեսուչ : Պ. Աղայեանց իւր մանկական վէպերու եւ ոտանաւորներու մէջ կ'երեւի այնպէս որ կարծես թէ կը թափանցէ մանկական զգացումներու մէջ, կամ, աւելի ճիշդն ըսելով, կը լինի մանուկ մը եւ մանկան պէս զգալով այդ չրճանի կենաց յուզումներն կ'ուրուագծէ իւր գրչի ներքեւ : Պ. Աղայեանց ունի ուրիշ յատկութիւն մը որ, կարելի է ըսել, եզական է հայ գրա-

կանութեան ասպարէզի վրայ • Հայկական հին դարու գրոյցներն վիպական ձեւով կը գրէ • այս կարգէն է նորա Առաջին որոյ բոլոր ընթերցողներն, գրեթէ առանց բացառութեան, կը գովեն այդ գրութեան: Բացի ոտանաւորներէ եւ հոգեբանական հիւնարի բանաստեղծութիւններէ ունի նա բաւական սրտագրաւ եւ ընտիր վէպ մը, Յոբան է • Մանուէլ: Պ. Աղայեանցի գործերն, համեմատաբար, ունին գրական մեծ արժանաւորութիւն: Աղայեանց քիչ կը գրէ, բայց միշտ լաւ: Բայց աստի նա առաջին կարգի գործնական մանկավարժ է: Ունի յոյժ քաղցրահամբոյր բնաւորութիւն • մանկան հետ մանուկ է, գիւղացիի հետ գիւղացի, աշակերտի հետ աշակերտ եւ գիտնականի հետ գիտնական եւ լուրջ մարդ • այս բնաւորութեամբ սիրելի է ամեն ուրեք, ուր ծանօթ է:

Փոքի մէջ կը տայէր Գէորգ Բարխուդարեան որ նշանաւոր հանդիսացաւ Լէսսինգի եւ Շիլլէրի թատերգութեանց հարազատ եւ ընտիր ոտանաւոր թարգմանութեամբ: Բարխուդարեան այնչափ պարզ կերպիւ թարգմանած է Լէսսինգի Նախնի մասին, Շիլլէրի Դոն-Կարլոս, Օրէստէ Կոյսը, Վէլսկէ Տէրը, Ֆիէսկոյ եւ, որ յոյժ գիւրահասկանալի են ամեն ընթերցողի որ տեղեակ է հայկական տաղաչափութեան եւ գիտէ ոտանաւոր կարգալու կանոնը:

Փանի մը տարիէ ի վեր խօսակցութեան մեծ առարկայ եղած է Հայկոսն որ կը գրէ Մեղաքի մէջ եւ իւր գրութեանց նպատակն ըրած է բնագիտութեան օգնութեամբ: Պ. Հայկոսնի թէեւ ունի սուր գրիչ եւ գրելու լաւ հմտութիւն, բայց նա այնքան կը ընտ կը գրէ որ կը թուի իրենց նշանակութիւնը կը կորցնեն գրութեան միւս արժանաւոր կէտերն: Վերջին երկու տարիներու մէջ չափաւորեց իւր կիրքն, այս պատճառաւ նորա քիչ շատ լուրջ բնագիտութիւնը բաւական մեծ հարուած տուաւ Բաֆֆիի հեղինակութեան:

Հայկոսնի որ բուն անուամբ Յ. Գեղամեան կը կոչուի (երբեմն Ալսլցխայի քաղաքապետն էր), գրած է բազմաթիւ ճանաչողական պատմական գործեր, որ կը պարունակեն պատմական կարեւոր տեղեկութիւններ այլ եւ այլ տեղերու Հայոց վրայ:

Բայ աստի գրած ունի վէպ մը, Գիւնդէ, որ կը նկարագրէ Երզրու մի Հայոց գաղթականութիւնն դէպի Ալսլցխա եւ Ալեքսանդրապոլ, եւ այլ պատմական կարեւոր տեղեկութիւններ:

Կան ուրիշ երկու վիպասաններ եւս, Մուրացան եւ Շիրվանզատէ, որ ընդհանրապէս «Կեանքի Պատկերներ» կը գրեն: Մուրացան արդէն ունի լաւ վէպեր, որպէս են Հայ Բարեպաշտ Ընդհանր, Իմ Կախարչի Հարսնացան, Հարսնայի Զոհարմանս եւ եւ, իսկ Շիրվանզատէն ունի Իմ Գործակարարի Յիշատակարանից եւ Նախն: Յոյս կայ որ ապագային լաւագոյն վիպասաններ պիտի լինին այս երկու երիտասարդներն: Եւ այժմէն իսկ չահած են բաւական համակիրներ, մանաւանդ Մուրացանը:

Գրականութեան տեսակէտով, Թիֆլիսի Հայ վիպասաններու մէջ առաջնակարգ տեղ մը կը գրաւէ Պերճ Պաշեան, թէեւ կարգ մը մարդիկ, որ սիրահար են շինծու եւ անբնական վէպերու, երկրորդական կը համարեն զայն: Պ. Պաշեանցի վէպերը գերազանց են այնու, որ միշտ պիտի պահպանեն իրենց կարեւոր նշանակութիւնն եւ հաւանորէն ապագային մէջ աւելի յարգի լինին քան այժմ: Պատճառն այն է որ Պաշեանցի վէպերը կը պարունակեն անյայտութեան մէջ մնացած պատմական բազմաթիւ դէպքեր եւ իրողութիւններ, կը պատկերեն Արարտեան աշխարհի եւ մասնաւորապէս Աշտարակի կենաց ամեն սովորութիւններն, առանց աղաւաղելու:

Պ. Պաշեանցի վէպերն այնքան կենդանի եւ բնական նկարագիր ունին որ, կարծես թէ, դէպքերն ժողովուրդի մէջ տեղի ունեցած ժամանակ ինքն հեղինակը մի կողմ քաշուած գրիչը ձեռքին իւր թղթի վրայ կը պատկերէ ամեն երեւոյթ, եւ զուարճութիւններն, եւ կուլին, եւ վիճաբանութիւնները, եւ նշանախօսութիւնն ու ամուսնութիւնը: Պաշեանցի գլխաւոր գործերն են Հայի Խնդիր, Կոտորածից, Շահէն, Սոս-Վարդիշէր եւ:

Իբրեւ բնագիտական պատմագէտ առաջին տեղը կը գրաւէ Ստեփաննոս Պալասեան եւ մինչեւ անգամ առանց տարակոյսի կարելի է ըսել որ ո՛չ Թուրքիոյ եւ ո՛չ Կաւկասիոյ Հայ գրական ասպարէզի վրայ կը գըտ-

նուրի նորա պէս քննադատ : Նա կը գրէր Փարի մէջ Գրէն ստորագրութեամբ : Երեւելի է Պ. Պալասանեանի Հայոց պատմութիւնը : Նորա բոլոր աշակերտները միահամուռ կը խոստովանին թէ թէեւ բազմիցս նոր ի նորոյ կարգացեր են Հայոց Պատմութիւնը ունիլ ուսուցիչներու մօտ, եւ թէեւ միշտ պաղ տպաւորութիւն գործած է այն, բայց Պալասանեանի դաս տուած Հայոց Պատմութիւնը այլ էր : « Բոլորովին չոր կմախք մը չէ՛ այն, այլ լի պատմական եւ ուսումնասիրական բազմութիւ եւ յոյժ հետաքրքրաշարժ կէտերով. մեզ կը թուէր թէ բնաւ կարգացած չէինք մեր Ազգային Պատմութիւնն, եւ ամենայն ուշադրութեամբ եւ հետաքրքրութեամբ կը լսէինք նորա դասերն » կը պատմեն Պ. Պալասանեանի աշակերտներն : Պ. Պալասանեան գրած ունի բանասիրական շատ յօդուածներ, Աշխարհաբառ Քերականութիւն եւ : Նա կը վայելէ առաջնակարգ եւ կատարելապէս պարտաճանաչ ուսուցչի հեղինակութիւն :

Առաջին եւ մեծ մանկավարժն է Սեդրակ Մանտինեան ոյր ձեռքի տակէն ելած աշակերտներու թիւն հարիւրով կը հաշուի : Նա կաւկասիոյ ամենէն արդիւնաւէտ մանկավարժն է : Ունի մանկավարժական քանի մը գրուածներ :

Ալեքսանդր Երիցեան յայտնի է հայկական հնագիտութեան վերաբերեալ բազմութիւ գրուածներով : Նիկողայոս Տէր Ղեւոնդեան լաւ մանկավարժ եւ հրատարակագիր : Կան եւ այլ անձինք, սակայն այսչափն բաւական է :

Ամենահամառօտ տեսութիւն մ'էր այս, որմէ աւելի անկարելի էր այլ եւս համառօտ գրել Թիֆլիսի գրագէտ դասի վրայ :

Կարեւոր կը համարիմ քանի մը խօսք եւ ըսել Պ. Գ. Նիկողոսեանի վրայ, որ իւր մի քանի յօդուածներով աւելի մեծ ծառայութիւն մատուցած է ազգին քան մեծ գրագէտ մը : Սովը կը տիրէր Վանայ կողմերն. Պոլսոյ մի լրագիրն եւ Թիֆլիսի Մեղու Հայաստանէն երեք չորս ամիսէ ի վեր անդադար կը գրէին թէ «սով կայ, պէտք է օգնել», այլ ի զուր, ո՛չ ոք կ'օգնէր : Այդ միջոցին Գ. Նիկողոսեան, որ իւր մեծաւորին զինուորական յարգանք չմատուցանելու համար անային բանտարկութեան դատապարտուած

էր, նամակ մը կ'ստանայ Պ. Կամսարականէն, որ կը նկարագրէ սովի պատճառած աղէտներն : Նիկողոսեան կը խորհի թէ «ահա լրագիրները երկու երեք ամիս է կը գրեն եւ արդիւնքն զէրօ է գրեթէ, պէտք է ցնցողական, պէտք է սոսկալի իրողութիւններ նկարագրել» եւ Մշակի մէջ կը հրատարակէ յօդուած Ո՞՞րքե՞նք վերնադրով : Նորա մէջ կը պատմէ թէ ամեն օր հարիւրաւոր տղաքներ կը մեռնին Պաշ - Գալէի կողմերը սովի պատճառաւ : Վանի մէջ օրն երկու հարիւր մանուկներ ցրտագին ձմրան բոկոտն կ'երթան Այգեւստան եւ ձիւնի տակէն հանելով խաղողի որթերն կուտեն անյագաբար : Խրիմեան Հայրիկ ամեն օր Ժողովուրդին քարոզ կուտայ եւ կը մխիթարէ ամբոխը որ սրտաճմիկ ձայնով կը դռէ Հայրէ՛ն, հա՛ց, Հայրէ՛ն, հա՛ց : Խրիմեան կը նուաղի եւ Ժողովուրդը ձեռքի վրայ բռնելով զայն կը տանի իւր բնակարարանը : (Այս տեսարան երկար ժամանակ Թիֆլիսի թատրոններու վրայ կը ներկայէին իւր կենդանի պատկեր :) Յօդուածի վերջին հեղինակը մանուկներու կողմէ յոյժ սրտայոյզ կերպիւ կը բացադանչէ. «Ո՞՞րքե՞նք, դիմենք . . . եթէ նա էլ չ'օգնէ դիմենք մեր . . . եթէ նա էլ չ'օգնէ դիմենք խղճին, եւ եթէ մեր խիղճն էլ լսէ թե՛նք հայութեան եւ հայ անուան վրայ եւ մեռնինք աստ սովաւանջ » :

Այս յօդուած այնչափ խորին յուզմունք պատճառեց տաքող կաւկասիոյ մէջ, որ խիոյն հանդանակութեան ձեռնարկուեցաւ եւ քիչ ժամանակէն հազարաւոր ռուբլիներ Ժողովեցան : Գ. Նիկողոսեան շարունակեց իւր այս օրինակ յօդուածներն որոցմէ միոյն մէջ կը նկարագրէր հայր մը որ անօթութենէ կորսնցունելով իւր խելքն կը մորթէ իւր փոքրիկ մանուկն եւ շերտ շերտ ընելով կրակի վրայ կը տապկէ եւ կ'սկսի ուտել ախորժանօք : Պրացիներն հոտն առնելով կուգան եւ կը տեսնեն օրդեկեր հայրն . . . Սա կ'սթապի յանկարծ եւ յուսահատ կ'աղաղակէ. « Ո՞՞րքե՛նք, օրդի՛ն կ'ուտեմ » : Երկրորդ յօդուածի մը մէջ կը նկարագրէ մանուկ մը որ կարնէն Թիֆլիս բերուած էր իւր բարեկամներու մօտ : Մանուկը բաւական ժամանակէ մը ի վեր տըխուր էր եւ օրէ օր կը հալէր կը մաշէր :

Բարեկամներն կ'ընեն չեն ըներ չեն կրնար իմանալ պատճառն : Վերջապէս մի անգամ կը յայտնէ : «մեր գիւղն ունիմ ինձպէս փոքրիկ տղայ մը , որ ամենալաւ ընկերս է . ամեն գիշեր երազիս մէջ կը տեսնեմ զայն , անօթի , հիւանդոտ . տեսնելով որ ես լաւ , լաւ կ'ընտեմ' անդադար կ'ըսէ ինձ արտասուալի աչերով . «Լեւոն , հինգ վեց օր է հաց չեմ ուտեր , անօթի' եմ , ա'խ կը մեռնիմ , չե՞ս տեսներ , իսկ դու ամեն օր լաւ լաւ կերակուրներ կ'ընտես եւ ինձ պատառ մ'իսկ չե՞ս տար , գոնէ քիչ մը ստակ զրկէ ինձ , Լեւոն , բարեկամներդ հարուստ են եւ կուտան եթէ ըսես որ ընկերդ անօթութեանէ պիտի մեռնի» : Այս վերջին յօդուածն արցունք քամել տուաւ Կաւկասիոյ բոլոր հայերու աչքերէն , եւ քիչ օրէն Ա. Բիշմիլեան Մեղրի մէջ գրեց . « Գ. Նիկողոսեանի վերջին յօդուածի շնորհիւ Թիֆլիսի մէջ իսկոյն ժողովեցինք 4500 ուրբի» :

Քանի մը տարի յետոյ Սամարայի (ի Ռուսիա) մէջ սաստիկ սով մը եղաւ եւ ժամանակակից Գալուսիոյ ամենազղեցիկ եւ մեծ թերթն հրաւէր կարդաց ամբողջ Ռուս ժողովուրդին , բայց հազիւ 3,000 ուրբի ժողովեցաւ : Այս առթիւ Գալուսիոյ պախարակելով ուսու ժողովուրդն , կը յարէ . «Փա՛ռք եւ պատի՛ւ Կաւկասիոյ Հայոց որ իրենց սովեալ եղբայրներու համար հանգանակեցին հաբիւր հապարով ուրբիներ , իսկ մենք , մեր ուսուսն միլիոն ուսու ժողովուրդն իւր սովեալ եղբայրներու համար ժողովեց 3,000 ուրբի միայն» :

Պ. Տ.

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ԹՈՒՐԱԽՏԻ ՓՈԽԱՆՅՈՒՄԸ

Արեւելի մէջ մի քանի անգամներ գրեցի Թոքախտի վերաբերեալ մանրամասնութիւններ , եւ սակայն ընդհանուր տեսութիւն մը այդ կարեւոր նիւթի վրայ օգտակար դատելով , անցեալ ամիս հրատարակեցի Բժշկական վարժարանի լրագրին մէջ

բաւական ընդարձակ յօդուած մը՝ յորմէ համառօտելով հետեւեալը կը ներկայացնեմ հետաքրքիր ընթերցողաց :

Փոխանցական ախտերը երկու կարգի կը բաժնուին , առողջապահական տեսակէտով առաջին , անոնք որ անուղղակի կը փոխանցուին որպէս «Թիֆոյիտ» տեսնուի . երկրորդ , անոնք որ ուղղակի կը փոխանցուին , ինչպէս գաղղիական ախտը : Այս երկրորդ կարգի հիւանդութեանց կը վերաբերի թոքախտը :

Յիշենք աստ թէ Պէրլինի բժիշկ մը , Քոխ անուն , երկու տարի առաջ գտաւ Թոքախտի բուն պատճառը , միջրոպ մը (մանրադիտական անասնիկ) զոր ի նանիր փնտռած էին ի բազմաց հետէ այլ եւ այլ գիտնական բժիշկք : Քոխ գտաւ , հանեց զայն , մաքրեց , զտեց , մարդկային մարմինէ դուրս սնոյց եւ աճեցուց . ուրիշ կենդանեաց պատուաստեց զայդ միջրոպ եւ ճիշդ թոքախտով վարակեցան պատուաստեալ կենդանիք :

Մինչ գիտութիւնը այսպէս երեւան հանեց Թոքախտի բուն պատճառը , անդիէն «Բրիտանական բժշկական ընկերութիւն» մը , կազմեալ յԱնգլիա , յանձնարարեց երկրին բժշկաց հետազննութիւններ ընել այս մասին , եւ քիչ ժամանակ ետքը , փորձն ալ եկաւ հաստատել թէ 280 հոգի՝ որ անզգու թոքամբ Թոքախտաւոր մարդոց հետ բռնակակցած կամ անոնց զգեստը հագած էին , փոխանցուած էին եւ Թոքախտով վարակուած :

Քոխի միջրոպը՝ նախ շնչառական խողովակաց մէջ կը մտնէ . հոն կ'աճի ու կը բազմանայ , յետոյ Թոքերուն հիւսուածքին մէջ կը յառաջանայ եւ կ'ուտէ , եւ այլ եւ այլ աւերադործութիւններ կ'ընէ . արեան շնչառութեամբ ուրիշ գործարանաց մէջ ալ կը թափանցէ , եւ զանոնք ալ կը հիւանտացնէ : Հետեւաբար երբ կ'ին մը Թոքախտաւոր է , Թոքախտի միջրոպը անոր ծիծերուն մէջ ալ կը թափանցէ եւ անոր կաթին մէջ ալ կը խառնուի : Ահա ինչու համար այնչափ վտանգաւոր է այսպիսի թոքախտաւոր կանանց թողուլ որ դիեցունեն իրենց մանաւանդ այլոց երախայները :

Թոքախտի միջրոպը , ուրիշ քանի մը հիւանդութեանց միջրոպներուն պէս դիւրաւ

չկրնար կեանք առնուլ. 36⁰, 6 տաքութիւն պէտք է գիշեր ցորեկ որպէս զի կեանք առնու եւ ապրի. եւ այս օդէկութիւնն ալ ունի որ երբ դինք հիւրընկալող անձը մեռնի, ինք ալ չկրնալով դիմանալ կը մեռնի:

Ինչպէս որ մեր տեսութենէն կ'երեւի, միջրոպը ամէն տեղէն աւելի թոքերուն մէջ կ'աճի եւ կը տեղաւորուի: Թոքախտը, ուրեմն, առաջին միջոցն է այս կենդանեաց բազմանալուն եւ փոխանցման: Թոքախտաւոր մարդոց արտաքսած թուրք կամ մաղասը այդ միջրոպները կը պարունակէ, եւ ըստ փորձերու Շիլ եւ Ֆիշէն անուն գիտնոց, թաց թուրք մինչեւ 43 օր եւ չորցած թուրք մինչեւ 186 օր կը պահէ եւ կը պահպանէ այդ միջրոպները: Այս մասին քանի մը բացատրութիւններ տանք:

1. Թուրք կամ մաղաս. — Այսօր անուրանալի կերպով հաստատուած է որ թոքախտի մը արտաքսած թուրքն անպատճառ միջրոպ կը պարունակէ: Այդ թոքախտաւորը չատ անգամ իրենց թուրքն հոս հոն թափելով կամ թաշկինակներու վրայ թնելով, այս թուրքեր կը չորնան հոն եւ փոշիներու հետ եւ օդին մէջ խառնուելով կը սկսին թունաւորել այն առողջ անձեր, որք կը ծածեն այս անմաքուր օդը: Ասոնք այլ եւ այլ փորձառութեամբք հաստատուած են ցարդ: Տօքթ. Ուիլեամս, լոնտոնցի, թոքախտաւորներով ի հիւանդանոցի սրահի մը օդափոխական գործիքին արտաքին խողովակներուն վրայ կլիսէրինով օժեալ առարկայակիր մը (porte-objet) դնելով, դուրս ելնող օդին մէջ Գոխեան կենդանիները տեսաւ. յետոյ հիւանդները դուրս հանեց եւ սրահին օդը մաքրեց եւ անգամ մ'ալ կրկնեց եւ ոչինչ նշմարեց:

2. Ենչատրեալ օդ. — Թոքախտաւորին արտադրած օդն ալ միջրոպներ կը պարունակէ: Տօքթ. Սմիթ երկու ծայրը բամբակ զտիչով գոցուած խողովակ մը թոքախտաւորներուն բերանը տալով յիշեալ զտիչին վրայ Գոխեան միջրոպները յայտ յանդիման տեսաւ: Այսու ամենայնիւ արտադրեալ օդը ծանր ըլլալով, միջրոպը չկրնար առկալ մնալ օդին մէջ, վասն որոյ շնչատրեալ օդը փոխանցման համար այնչափ շնչաստեր որչափ թուրք:

3. Կաթ եւ միս. — Թոքախտի միջրո-

պը կը գտնուի նաեւ թոքախտաւոր մօր մը կամ կենդանւոյ մը կաթին եւ մսին մէջ: Տարի ու կէս առաջ ի Գօքէնհակ գումարեալ համազգային առողջական ժողովոյ մէջ Տօքթ. Պանֆ ապացցոյց զայս եւ Շօլօ, Պօլինկէր, Սօրմանի ուրիշ փորձերով հաստատեցին զայն: Պէտք է գիտնալ որ միս մը եփելու համար վատնուած ջերմութիւնը բաւական չէ միջրոպները մեռցնելու. կը հասկցուի որ միսերը ինչպէս կը ծառայեն այսչափ արագ օդէն տարածելու թոքախտը մարդկային սեռին մէջ:

Առողջապահութիւն. — Ինչպէս գրեթէ ամեն հիւանդութեան համար, նոյնպէս թոքախտի համար կրնայ ըսուիլ թէ բաւական չէ որ մարդ մը հիւանդութեան պատճառաց ազդեցութեան ենթարկուի այն հիւանդութեան բռնուելու համար: Ինչպէս որ ցորենի հատերը այն ատեն կը ծլին ու կ'արդասաւորին, երբ կը ցանուին այնպիսի արտերու վրայ՝ որոց հողին քիմիական բաղադրութիւնը հարկաւոր սնունդները կը պարունակէ, նոյնպէս թոքախտի սերմերը (միջրոպները) մարդկային մարմնոյ մէջ զարգանալու համար պատրաստ միջավայրներու կարօտ են: Ահա այս վիճակն է որ բժշկական լեզուով Գրամպլե-Էն կը կոչուի եւ երկուքի կը բաժնուին որք են ընդհանուր եւ տեղային:

Ընդհանուր տրամադրութիւնը դժուար է սահմանել. բայց կը կայանայ գլխաւորապէս այն Ֆիզիօլօգիական թշուառութեան վրայ՝ զոր շատ լաւ կը նկարագրէ Պուչաուտա իւր հոյակապ Առողջապահութեան մէջ եւ որ արդիւնք է ամէն տեսակ չափազանցութեանց եւ զրկանաց: Աւասիկ ներկայ քաղաքակրթութիւնը գլխաւոր պատճառն է այս վերջնոց. հարկ չկայ բացատրելու թէ ինչպէս:

Տեղային տրամադրութիւնը բացատրենք այժմ:

Որպէս զի միջրոպը իւր ինկած տեղը կեսանորոգի եւ զարդանայ, հերկուած արտ մը կուզէ, ինչպէս ըսինք վերը. այս մասին ալ լաւագոյն դերը կը կատարեն իրարու յաջորդող հարբուխները: Հարբուխը (պրօ-շիս, բէ-ճ եւ) շատ մը մաղաս կամ խինք կը հանէ որոնք միջրոպներուն ժողովատեղի կը լինին, շնչառական խողովակին պահպանիչ

Թաղանթը կը հանեն եւ վէրք այսինքն դուռ կը բանան միջրոպին, այս մանրադիտական ահարկու թշնամոյն, ի ներքս խուժելու: Այս պատճառաւ, անտեսելու չէ այդ փոքրիկ անկարեւոր հարբուխները որք մանաւանդ յաճախակի կը պատահին կարգ մը աւալային կազմութեան տէր անձանց ըով:

Ինչ ընել պէտք է արգիլելու համար, հնար եղածին չափ, թոքախտին փոխանցումը: Երբ խօսքը հետախտի կամ նմանօրինակ ախտերու վրայ է, կը հասկնանք այն օգուտը զոր ունին բառասնորդք (quarantaines) ինչ որ ալ ըսեն հանգուցեալ ժիւլ Կէնէն, եւ իւր հետեւորդք (կարծեմ չկայ ալ . . .) Բայց ինչպէս փախչելու է հիւանդութիւնէ մը՝ որ համօրէն մարդկութեան մէջ արմատ արձակած է: Մենք պիտի բացատրենք այն տեսակ միջոցներ որոնց գործադրութիւնը հնարաւոր է մինչեւ աստիճան մը:

Որ եւ է անձ, երբ տրամադիր կ'երեւի թոքախտի եւ որ անընդհատ հարբուխներ կ'ունենայ, պէտք է հեռանայ ըստ իրենց բազմութենէն, երթայ գիւղ մը, բարձրիկի դիրք մը բնակի: Քանզի ոչ միայն մաքուր օդ մը կը ծծէ անդ, այլ եւ մարմինը, տեղւոյն օդին ֆիզիքական եւ բնական ազդեցութիւններով, կը վարժուի ցուրտին եւ տաքին, եւ շուտ շուտ հարբուխ չունենար:

Երբ անձ մը հնացեալ (+քծնէ+) ախտ մը ունի, կամ հարսանիք՝ եւ կամ կապոյտ հազ, պէտք է հեռի մնայ, ըստ կարելոյն, թոքախտ ունեցող կամ կարծուող հիւանդներէ: Այս պայման աւելի ուշադրութեան առարկայ պէտք է լինի հասարակ եւ բարձր դպրոցներու մէջ, զօրանոցներու մէջ, բանտերու մէջ եւ հիւանդանոցաց մէջ: Դրժբաղդաբար, մանաւանդ դպրոցներու մէջ բնաւ կարեւորութիւն չտրուիր այդ կենսական խնդրոյն, մինչդեռ պէտք էր ամենայն ուշադրութեամբ հսկել դեռատի ուսանողաց առողջական վիճակին: Ուստի կը յանձնարարեմք որ երբ դպրոցին մէջ որ եւ է ուսանող թոքախտի նշան մը ցոյց տայ, պէտք է կամ առանձնացնել սենեակի մը մէջ եւ այնպէս խնամել տալ, եւ կամ իւր ընտանեաց վերադարձունել: Ուսանողաց ընդունելութեան ժամանակ՝ պէտք է քննել

տալ անոնց առողջական վիճակը, եւ երբ թոքախտի փոքրիկ նշան մը տեսնուի, չընդունիլ, որովհետեւ թոքախտաւոր մը որչափ թեթեւ ալ վարակուած լինի նորէն բաւական է իւր թուքերով պղծել իւր գանուած տեղւոյն օդը: Նոյնը պէտք է ընել զօրանոցներու համար: Քուէարկութեան ժամանակ թէեւ կը քննուի ու կը մերժուի այն զինուոր որ թոքախտի փոքրիկ նշան մը կրէ, բայց նորէն մեռնողներուն մէկ երրորդը թոքախտէ կը մեռնի: Ուստի պէտք է մեկուսացնել ախտաւոր զինուորները:

Հիւանդանոցներու մէջ ինչպէս որ կ'անջատուին ծաղիկ, թիֆօյիտ տենդ եւ նեցողներ, նոյնպէս պէտք է անջատել թոքախտաւորները:

Հա՛պա կաթն ու միսը. — պէտք է որ անպատճառ մասնաւոր կենդանաբոյժներ յատկացունին գլխաւոր պաշարներու, ըսպանդանոցներու եւ ախտներու, քննելու պաշտօն ունենալով բոլոր ուտելի կենդանիները: Փոքրիկ տուրք մը վաճառողէն կ'առնուի եւ այդ կենդանաբոյժներու վարձք կը վճարուի յօգուտ հասարակութեան:

Արդ ըիջ մ'ալ խօսինք այն միջոցներու վրայ՝ որք կը ծառայեն Գոխեան միջրոպները սատկեցնելու: Ա. Թուրք. — Վերը ծանուցինք որ մեծ թերութիւն մ'է թուրք անհոգութեամբ թողուլ, եւ ասոր պատճառն ալ բացատրեցինք: Վասն որոյ պէտք է արգելուլ հոս հոն ձգելէ թուրք եւ որդաջինջ նիւթի մը ազդեցութեան տակ թողուլ հարկ է: Շիլ եւ Ֆիշէն ապացուցած են որ լաւագոյն դեղը որ սատակամահ կ'ընէ միջրոպները Ասիոյ Ֆէնիգի ջուրն է 5 առ 100 համեմատութեամբ: Թուրք պէտք է թողուլ 24 ժամ այս ջուրի հետ խառնուած: Հիւանդին տէրերը պէտք է ուշ դնեն այս կարեւոր կէտին եւ անվրէպ գործադրեն զայն:

Բ. Շնչատրեալ օդ. — Ըսած էինք որ թոքախտաւորներուն շունչը միջրոպ կը պարունակէ. ուստի պէտք է հեռի մնալ անոնց բնակած վայրերէն, որչափ որ կարելի է. երբ մանաւանդ հարբուխ ունենայ մարդ, աւելի զգոյշ կենալու է: Ամուսնոց մին-եթէ թոքախտէ բռնուի, ամէն կարելի

միջոց ի գործ դնելու է անջատ կենսացե-
լու համար :

Գ. Միս եւ կաթ . — Հարկ կա՞յ ըսելու
թէ թոքախտաւոր կնոջ արգիլելու է կաթ
տալ երախայի մը : Այն մայրեր կամ ստըն-
տուներ որոնք այսպէս անգիտութեամբ
կամ անզգուշութեամբ դիեցուցած են փոք-
րիկ երախայներ, թոքախտի ելունդներ
պատճառած են անոնց, այսինքն աղետաց
հիւժախտ (պալլուրաֆ փրէֆ, Caricau) :

Գալով ուտելի միսերուն, ինչպէս նաեւ
կաթին, քանի որ չենք գիտեր ո՛ւստի, ո՛ր-
պիսի կենդանիէ առնուած լինելը, հարկ
անհրաժեշտ է մեզ եռացնել զանոնք : Գի-
տողութեան արժանի է որ Քոխեան միք-
րոպներ չեն կրնար ջուրի եռացման աս-
տիճանին այսինքն 100° ի տոկալ ե կը մեռ-
նին :

Պէտք է նաեւ արգիլել հում միս կամ
կաթ ուտելը, որ իբրեւ առողջութեան նը-
պաստամատոյց կը համարուի, թէեւ իրա-
ւամբ : Արժան է յիշել այն առածը որ կ'ը-
սէ . «Երկու շարեաց լաւագոյնը ընտրե-
լու է » :

ՏՕՔԹ . Ռ . ՌՕՊԷՆՍՕՆ

(Իշխան Լրագիր Բաղադային Բժշկութեան
Դպրոցին . Թիւ 141 - 142 - 143)

ՆՈՐԱՎԷՆ

ՍԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՇԵՐ

ՊԱՏԿԵՐ ԼԵՀԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՅ

Թանձր մառախուղը տարածել էր իւր
մաշլ թեւերը սպիտակ սաւանով պատած
ամայի դաշտերում : Խաւարոջին, մութ գի-
շեր էր : Լուսինը, երկրիս երեսին կատար-
ւող դէպքերի այդ լուռ վկան, ի զուր էր
ջանք գործ դնում թափանցել իւր արծա-
թագօծ շողերը գոռոզ ամպերի խիտ շեր-
տերից, որոնք ամբողջովին բռնել էին երկ-
նակամարը :

Անեղը, ամայի դաշտերն սպիտակ սա-
ւանի տակ թաքնուած տարածուել էին ան-
հոգ կերպով ամենուրեք, ուր աչքդ դարձ-
նէիր . միայն հեռու արեւմտքում, հորիզոնի

վրայ հազիւ հազ նշմարվում էր անտառը,
այն էլ այնքան անորոշ, որ որ եւ է գծա-
գրութիւնից զուրկ հսկայատեսիլ մի քանա-
կութեան էր նմանում : Մի տեսակ խորին,
խորհրդաւոր լուսթիւն, գերեզմանային
անդորր լուսթիւն տիրում էր այդ գիշերա-
յին խաւարում :

Յանկարծ, անտառից մի անորոշ ձայն
լսուեց : Եւ այդ ձայնը, որ ոչ ասեւ վըշ-
տի խուլ արձագանք էր, ոչ խիստ սպառ-
նալիք, վրդովելով տիրող լուսթիւնը, կըրկ-
նուեց երկու անգամ երկա՛ր, երկա՛ր, ու
լուեց, կարծես թէ քաշուելով իւր վստա-
հութիւնից, որ յանդգնել էր այդ գիշե-
րային ժամուն վրդովելու տիրող խորհրդա-
ւոր լուսթիւնը : Նորից անդորր տիրեց ա-
մենուրեք . մի միայն հիւսիսային քամու
սառնաչունչ հարուածները մռնչելով անց-
նում էին ամպածրար եղեւնիների բարձր
դագաթներից եւ արհաւիրքով ձիւնաթաղ
դաշտերը մտնում, ցիր ու ցան անելով
ձեան տատալները օդում, որոնք սարսա-
փահար, սպիտակ տեսիլների նման մի տե-
ղից միւս տեղ էին շարժվում անեղր տա-
րածութեան մէջ :

Այդ ինքնակոչ, անգութ հիւրը չը խը-
նայեց ամպերին անգամ :

Ամպերը, որոնք մինչ ցայն վայր դանդաղ
կերպով խտանում էին, սկսան փոքր առ
փոքր մի տեսակ վեհութեամբ թողնել իրանց
յարմար ապաստանը . սակայն երկար չտե-
ւեց այդ խաղաղ ընթացքը : Քամու խիստ
հարուածներից ընկճուած մի առ ժամանա-
կից սկսան իրար անցած փախուստ տալ .
խիկ փոթորիկը նրանց ետեւից ընկած ան-
խըղճօրէն հալածում էր նրանց դէպ հա-
րաւ ահաբեկուած թռչնոց երամի նման,
ցիր ու ցան անելով անհուն երկնակամա-
րում :

Երկինքը պարզուեց, թէեւ դեռ տեղ տեղ
նշմարելի էին փոքրիկ ամպերը, որոնք մի
տեսակ գծագրութիւն էին ներկայացնում
կապուտակ, աստեղագարդ երկնքում, կար-
ծես թէ լրացնել կամենալով երկնքի ճօխու-
թիւնը : Երեւաց եւ դժգոյն լուսինը, ար-
ծարժելով իւր դողդոջուն նշոյլները համա-
հաւասար լուսթեան մատնուած ձիւնա-
փայլ դաշտերում :

Անտառից մի քանի քայլ հեռու, այդ

հարթ տարածութեան, սպիտակ մակերեւոյթի վրայ նշմարվում էր այժմ մի անշարժ բան, սեւ ստուեր:

Հետաքննին աչքը, լուսնի աղօտ լուսի տակ կը տեսնէր արեան դաշտի մէջ ընկած մերձ ի մահ վիրաւորին: Նրա մահացու վերքից կաթիլ առ կաթիլ, դանդաղ, բայց անընդհատ քամվում էր դեռ տաք արիւնը:

Մի քանի վայրկեան եւս, թերեւս դադարէր հոսումը ընդ միշտ..... Նա երկար ընկած էր անզգայ դրութեան մէջ: Սառնամառ ներգործութիւնից նա ուշքի եկաւ, բայց աւա՛ղ, ոչ առ յաւէտ:

Գիտարութեամբ մի շարժում գործ դրեց, տխուր եւ խոր հառաչանք դուրս թողնելով կրծքից, եւ ծանրացած կոպերը վեր քաշելով սկսեց դիտել պարզ երկնականարը իւր թախծալից, նուազկոտ աչքերով: Նրա ուղեղը սկսեց գործել: Բիւրաւոր հարցեր եկան դիզուեցին նրա առաջ:

Ո՛ւր էր գտնվում ինքը: Ի՞նչ էր պատահել իր հետ: Իսկ ընկերները, ո՛ւր են նոքա: Այս հարցերը խռնվում էին նրա կապտած լուռ շրթունքներին: Նա չը կարողացաւ մի անգամից հաշիւ տալ իրան սկզբում. բայց վերջապէս հասկացաւ իւր սարսափելի դրութիւնը, անխուսափելի վախճանը, որ ահուելի դէմքով սպասում էր անվրէպ իրան:

Այս գիշերին յեղափոխականները մութ անտառից դուրս հանդիպեցին թշնամու բանակին, այո՛ այո՛ գիշերին այդ իսկ անտառից դուրս: Նո՛յ յիշեց, ինչպէս չըջապատուած բիւրապատիկ զօրեղ թշնամիներից կատաղի կերպով կուռեցին իրանը, որքան ոյժ ունէին: Մտաբերեց, ի՞նչպէս իրանց մի փոքրիկ մասը միայն ձեղքելով թշնամու բանակը կարողացաւ ազատուիլ կորուստից: Ինքն իսկ, այո՛, մի քանի տեղից ծանր վէրք ստացած հետեւեց միւսներին, սակայն արեան կորուստը խլեց նրա գիտակցութիւնը ու անտառից հազիւ մի փոքրիկ տարածութիւն հեռու կորցնելով հասարակչութիւնը ընկաւ ձիուց, անօգնական:

Ընկերները, որոնք զբաղուած էին իրանց փախուստով, չը նկատեցին անգամ նրա բացակայութիւնը: Զին անգամ թողեց

իր սանձողին, ընդարձակ, ամայի դաշտում հետեւելով միւսներին:

Նա զգում էր, որ վէրքը մահացու էր. մի քանի վայրկեաններ եւս, եւ ամէն ինչ կը վերջանար, կը փչէր վերջին շունչը, միայնակ այդ ամայի դաշտում, մոռացութեան մատնուած, զրկուած սիրած աղջկայ քնքուշիկ մատներից, որոնք չէին փակելու իր նուազած, թառամած աչքերը: Այո՛, միայնակ, անյայտութեան մէջ: Այդպէս է վիճակուած իրան, այդպէս է ճակատագիրը որոշել եւ իւր այն բիւրաւոր ընկերներին, որոնք ընկան այս գիշեր, այո՛ այս գիշեր արեան դաշտի մէջ.....

Այնքան ցաւ չէր նրա համար, այդպէս, միայնութեան մէջ, անյայտ մեռանելը: Ո՛հ, որքան բաղդաւոր, որքան երջանիկ կը համարէր, ինչքան քաղցր կը զգար այդպէս անյայտութեան մէջ ունեցած մահը, եթէ գիտենար որ իւր մահուամբ գոնէ՛ նպատեց փոքր ինչ, ճնշուած հայրենիքի սո՛ւրբ ազատութեան, գէթ փոքր ինչ, այո՛... իսկ այժմ... նա ընկաւ ոչ թէ յաղթանակ տանելով, այլ աւա՛ղ յաղթուած: Անտեղի, ունայն անցաւ բոլորը, բոլորը: Ի գո՛ւր այնքան զոհ ընկաւ կուռի դաշտում, այնքան տաք արիւն հոսեց, գոյութեան անյուսալի պատերազմում: Եւ աղեկտուր, դառն հառաչանք, խո՛ր հառաչանք դուրս թողեց խոցոտուած կրճից: Սոյնօրինակ տխուր մտածմունքների դառն զգացմունքները լեռնացած ալիքների նման գալիս ընդհարվում էին նրա առանց այն էլ խորտակուած կրծքում:

Այժմ նրա կուրծքը բաբախում էր աւելի ուժեղ, արագացնելով շնչառութիւնը, աւելի՛ ու աւելի՛: Անխուսափելի, դաժան մահը իւր սուր մագիլներով պտըտկում էր նրա շուրջը: Մի քանի վայրկեաններ եւս և կը վերջանար ամէն ինչ, մահը վերջ կը տար նրա բոլոր տառապանքներին:

Մահուան տագնապից նրա ուղեղը գործում էր բնականից դուրս: Կարծես թէ կեանքի այդ մի քանի մնացած վայրկեաններում նա կամենում էր ապրել գործել մի քանի տարիների փոխարէն, երկա՛յն ձիւ տարիների, լրացնել մեռանողի ակնկալութեանց քաղցր յիշատակները:

Անցեալի մտապատկերները խմբովին գա-

լիս գիտվում էին նրա գիտակցութեան մէջ : Երիտասարդական հասակի քաղցր մտապատկերները, նրա յուսալից տենչանքները, այդ հասակում տեղի ունեցած իւրաքանչիւր մի դէպքը անգամ եւ . . . սրտի սիրած, անգնահատելի անձնաւորութեան՝ սիրալիր դէմքը, բոլորը, բոլորը բարձրանում էր նրա գիտակցութեան սեմի վրայ նոյն կարգով, ինչպէս կատարուել էր իրականութեան մէջ, սկսած նոյն իսկ այս գիշերուայ կուռի դառն վախճանից :

Անտառի իւրաքանչիւր մի ծառը անգամ, որոնք նրա աչքովն էին ընկել վախուստի ժամանակ, նա այնքան պարզ այնքան որոշ տեսնում էր, որ կարծես թէ երկրորդ անգամ նա նկատում լինէր այդ բոլորը :

Իսկ երիտասարդութիւնը, որ այնքան փառաւոր ապագայ էր խոստանում . . . Խորտակեց այս ահռելի գիշերը, ի դերեւ հանեց, այո, այս գիշերը . . . եւ նրա կուրծքը սկսեց աւելի արագ եւ ուժգին բաբախել . . . Չէ՞ որ այսօր սիլվեստրեան գիշեր է, մտածեց նա : Այո, այսօր հին տարուայ վերջին գիշերն է, ասել է տարին էլ մեռնում է ինձ հետ, ես միայնակ չեմ . . .

Այո, նա միայնակ չէր, թշուառութիւններով լի տարին, դժբաղդութիւններով առատ, յուսահատիչ, վատիչ տարին կը մեռնի նրա հետ ի միասին . այս գիշեր չը լուսացրած, նոր տարին կը սկսի չուտով, նորից կը փայլի վառ արշալոյսը արեւելքում : Բայց աւա՛ղ, նա այլ եւս չի տեսնել նոր յոյսերով լի նոր տարուայ առաջին շրջերը :

Նորից անցեալի, քաղցր անցեալի յիշատակները խռնուեցին նրա մտածողութեան մէջ : Զարմանալի է, ի՞նչ խստութեամբ է ճակատագիրը վարվում մարդու հետ : Մի տարի առաջ, ո՞ր տեղից կարելի էր գուշակել, որ այդ պիսի վախճան է սպասում իրան : Մի տարի՝ միայն, այո, մի տարի, սակայն որքան փոփոխութիւն . . .

Մի տարի առաջ, չրջապատուած իր սիրելի ազգականներով եւ բարեկամներով, լուսաւորուած տաք սենեակում սպասում էր նրանց հետ ի միասին հրաժեշտ տալու հին տարուան, նորին հանդիպելու ուրա-

խութեան զիլ ողջոյնով եւ անկեղծ բարեմաղթութիւններով, մոռանալու հին վըշտերը, երջանիկ եւ քաղցր օրեր մաղթելու իրար, եւ յուսոյ նորանոր ակնկալութիւններով, ձեռք ձեռքի տուած, մոռացութեան անդունդը գլորելու բիւր ցաւերի դառն կսկիծը : Նա յիշում էր պարզ կերպով, ի՞նչպէս սենեակի մէջ տեղում պայծառ գինւով լի բաժակներով ծանրաբեռնուած սեղանը անհամբեր սպասում էր կէս գիշերուան . իսկ սենեակի անկիւնում գլտնուած հինաւուրց պապական աւանդ ժամացոյցը, որ այդպիսի հարիւր յիսուն Սիլվեստրեան գիշերներ էր անցկացրել, իւր սլաքները դանդաղ յառաջ մղելով, ի՞նչպէս այդ գիշեր եւս նոյն համանման բաղնիքում դարձեալ նոյն քայլով, տակաւ առ տակաւ յառաջ էր շարժում իւր սլաքները եւ ներկայ եղողներին համբերութիւն կարդում : Իսկ ինքը Անելինայի հետ քաշուել առանձնացել էր լուսամտի մօտ, չը խանդարելու հասակաւորների խօսակցութիւնը, որոնք առանց այն էլ շատ յիշողութիւններ ունէին անցեալ կեանքից, որոնք բաւականին նիւթ կարող էին տալ այդպիսի մի օրուայ խօսակցութեան :

Նա լուռ էր Անելինայի հետ . . . այո՛, լուռ էր միայն շրթունքներով . իսկ խորհրդաւոր տիրող խօսակցութիւնը շատ հասկանալի էր փոխադարձաբար :

Նրա իւրաքանչիւր մի հայացքը, կրակոտ տարփալից հայացքը պարզ խօսում էր նրա տեղ. — Սիրում եմ քեզ, Անելինա, սիրում պաշտում, պաշտում եմ հոգուս հատոր, որ այդքան սիրուն ես, չքնաղ ես, բարի՛ ես : Իսկ օրիորդի դրաւիչ, քնքոյշ հայացքից, սիրալիր հայացքից նա կարդում էր, հասկանում էր նրա անբարբառ խօսքը. «Դու իմն ես, ես քոնը, քոնը յաւիտեան» :

— Դէ՛հ, մօտ եկէք, առէք բաժակները, չուտով նոր տարի է, դարձաւ դէպ երիտասարդ զոյգերը Անելինայի հայրը վերջապէս :

Ճրագները մարեցին, սենեակում տիրեց խաւարը (1) ուր լսելի էր բաժակների ու-

(1) Լեհացիք սովորութիւն ունին նոր տարուայ գիշերը, երբ հնչում է ժամի 12 ը, հանգցնում են սենեակի ճրագները եւ այնպէս հանգիստում նոր տարուան. այդ սովորութիւնը կայ եւ մինչ այսօր :

րախ չընկոցը: Միայն փողոցից մի քանի մոլորումած լուսոյ շառաւիղներ սառցանըկարով զարդարուած ապակիներից թափանցում էին սենեակի ներսը: Խորին լռութիւն էր տիրում ներկայ գտնուողների մէջ, որոնցից իւրաքանչիւրը խորասուզուած էր իւր անցեալով: Լսելի էին միայն ժամացոյցի ձօձանակի համաչափ զարկերը, դատապարտեալի բանտին հանդէպ յետ ու առաջ անող պահապանի միաջամբ քայլերի նման: Մահուան դատապարտուած տարուան մնում էր մի միայն մի քանի րոպէ, մի քանի վայրկեան եւս ապրիլ, հասել էր նրա վախճանը եւս:

Նա առաւ ձախ ձեռքով լի բաժակը, իսկ աջով սեղմեց օրիորդի բնքուշիկ, դողդոջուն ձեռքը: Օրիորդը եւս պատասխանեց ձեռքի սեղմելուն: Յանկարծ մի տեսակ հնչիւն գործեց ժամացոյցը, այդ հին տարին աւարտեց իւր կեանքը, դրան անմիջապէս հետեւեց ժամացոյցի կոշնակի առաջի հարուածը, արձագանք տալով սենեակում, ինչպէս նորածին մանկան առաջի թոթովը:

Սենեակին կից դահլիճի դուռը բացուեց որտեղից ներս թափանցող լուսոյ ճառագայթները լեցրեցին սենեակը լուսաւորելով ներկայ գտնուողների դէմքերը: Սիրահար զոյգը ցնցուեց, անցաւ քաղցր վայելքը, և ջերմ սեղմումով ձեռները բաժանուեցին...

Միթէ՞ այս տարի նրանք պէտք է բաժանուեն իրարից...

... Յիշողութեան ոսկեայ ժապաւէնը ընդհատուեց այստեղ, նրա ոյժերը քանի գնում թուլանում էին, ամեն մի սահող վայրկեանը խլում էր նրա առանց այն էլ սպառուած ոյժերի մի մասը: Յիշողութիւնը, քաղցր յիշողութիւնը կորցնում էր նրան, նորից գտնում: Նրա կուրծքը բաբախում էր անկանոն եւ քանի գնում աւելի դանդաղ իւր ելեւէջները կատարում: Արիւնք վերջից հոսում էր շատ դանդաղ, կաթիլ առ կաթիլ: Մահուան տագնապը պատեց նրան, նրա աչքերը մթնեցին: դեռ եւս մի բան կարծես նա գիտում էր մռայլ կերպով, մի սպիտակ տեսիլ պտտւում էր կարծես թէ նրա առաջ, այդ սիրած ազնկայ համեստ, քաղցր պատկերն էր, որ թւում էր նրան լուսնի կաթնագոյն շողքերում, փայլուն աստղը ճակատին: Մի տեսակ քաղցր մեղմ

ժպիտ խաղաց նրա դժգոյն շրթունքների վրայ, ապա թեթեւ ցնցումից յետոյ տարածուեց մարմինը...

Նրա կուրծքը այլ եւս չէր կատարում իւր ելեւէջները. նա դադարել էր յաւիտեան: Յուսոյ քաղցր ժպիտը մի միայն դեռ նշմարելի էր նորա թառամած շրթունքների վրայ. իսկ մարած աչքերը խոշոր բացուած դեռ եւս դիտում էին անթարթ փայլուն աստղին:

Նա վերջացրել էր իւր երկրաւոր կեանքը:

Նորից անորոշ ձայները լսելի եղան անտառից, որոնց արձագանքը կրկնուեց մի քանի անգամ ահուելի կերպով: Ձայները քանի գնում մոտենում էին: Այժմ հեռու նըշմարվում էին տեսակ մը շարժուող սեւ կետեր, որոնք քանի գնում բազմապատկւում էին աւելի ու աւելի... Փոքր առ փոքր այդ շարժուող սեւ կէտերը մոտենում էին անշնչացած դիակին: Այժմ պարզ նկատելի էր նրանց գիշերային խաւարում պնդող, փայլուն, սարսափելի աչքերը: Նրանք շրջապատեցին դիակը: Մի քանի վայրկեան եւս, ահա գայլերը կը սկսեն իրանց խնջոյքը: Խեղճի ոսկորների փշրանքը անգամ չեն գտներ ընկերները: Կը գտնեն մի միայն այն փայլուն աստղին, որին նայելով նա հոգին աւանդեց այդ ամայի դաշտում, որը նրա յուսոյ վառ աստղիկն էր...

Թարգ. 204

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՁԵՄՕՆ

(ԳՆԻԱՌԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ)

Ձըմն (Ձմրութ) Խնուսոյ Ղարա-Չոպան գիւղացի, հիանալի գեղեցկութեամբ հաշակուած հայ աղջիկ մ'է, ինչպէս կը տեսնուի հետեւեալ տողերէն: Այդ գիւղի երեսփոխանն որոշեալ սակարկութեամբ շատ աշխատած է իւր որդւոյն առնել զայն, բայց Ձըմն հաւանութիւն չ'տալով իւր սիրած միջնակարգ վիճակէ եւ իրմէն աւելի գեղեցիկ պատանւոյ մը հետ ամուսնացած է, յաղթելով շատ մը դժուարութեանց, որոյ համար գիւղի մեծ մասն կը գովեն զինքը:

Լուսնակ գիշեր կարճ գիշեր,
Կեռ ընթրի կարմիր թըշեր,
Քանի բերանը բանայ,
Կը թափի անուշ նըշեր:

Զըմօն եղաւ պար պաշի,
Շորորաց զըպնի¹ փէշեր,
Գիշերալուս լուսնակը,
Ամթուն ամպի մէջ էր:

Զըմօյի կլոր երես,
Քան ըզ լուսնակ պօծաւ էր²,
Ով որ տեսնէր Զըմօյին,
Հօրն ու մօրը խէր չունէր:

Այա Զըմօյ, քաֆըր³ Զըմօյ:
Վառեցիր զըմէն⁴, Զըմօյ:

Սեւ մազեր, խորօտ աչվիք
Կարմիր թըշեր, կեռ ընթրի,
Ես երեսփոխնի լաճն եմ,
Զըմօն ինծի եար պիտի:

Տասն ոսկի հէ տէմէսի⁵,
Քսան էլ խալան⁶ կիտամ,
Մէկ սագոյ մէկ էլ քէհլ⁶
Ուր պապուն խալաթ⁷ կիտամ:

Զըմօն ուր սիրածն առաւ,
Երեսփոխնի լաճ մեռաւ:
Հաւաքեց Ուղեհորն

¹ Էթթարի. ² Պայծառ. ³ Անդուլթ. ⁴ ամէննալ.
⁵ Գեղանի. ⁶ Այս՝ ըսել. ⁷ Աղջկայ գին. ⁸ Ընտիր ձի.
⁹ Նուէր:

Տ Ե Ղ Ա Ք Ր Ա Կ Ա Ն

ՎԱՆԵՆ ՅՊԱՅՄԱՋԻՏ

Բ.

Ի սպառնալուծս Ապագա դաշտատափին
Եւ ի սահմանագլուխն Պայազիտի գաւառին
6,100 ոտք բարձրութեան մը վրայէն ի տես
կուգայ յանկարծ այնքան ականապարար,
հիանալի եւ փառահեղ մի տեսարան, որ-
պիսին ունի երկնաբերձ լեռանց վեհափառ
կայսրն տիեզերահամբաւ ՄԱՍԻՍ ն միայն,
որ իւր անծայրածիր անբաւութեամբն, ան-

պարագիծ ստուարութեամբն, ամպածրար
եւ երկնահաղորդ բարձրութեամբն, յաւէտ
սպիտակ, յաւէտ ձիւնափառ գագաթովն
կը թուի միակ սիւնն եւ նեցուկն լինիլ ոյր
վրայ կանգնած կը մնայ երկնակամարն իւր
եթերով եւ հաստատութեամբը: Այդ գե-
րափառ և գերասքանչ երեւոյթն ինքնին բա-
ւական է աղբէլ զինքը տեսնող մահկանաց-
ունն անճառ հիացում, ահեղ սարսուռ ըզ-
մայման եւ խոր դղրդիւն ջղային կացու-
թեանը մէջ մտապէս, բարոյապէս եւ ֆի-
զիքապէս, եթէ այդ մահկանացուն իսպառ
տգէտ եւ անծանօթ իսկ լինի հին եւ նոր
պատմութեան, հին եւ նոր աշխարհագրու-
թեան: Բայց եթէ օժտեալ լինի այդ գի-
տութեամբը գէթ դոյզն ինչ եւ մանաւանդ
մի Հայ լինի, ալ անհնար կ'ըլլայ նմա բա-
ցատրել իւր հոգւոյ յուզումներն, իւր զգա-
ցումներն ի տես հայկականն Արարատայ,
թէն նորա բնակիչ բոլոր Մուսայից շնորհը-
ներով եւ ձիրքերով փայլեալ ըլլայ:

Մասին իւր վեհութեամբն հետզհետէ
աւելի բացայայտ և պայծառ երեւան կ'ենէ
ցորչափ աւելի մօտենաս Պայազիտի, զի հա-
զիւ տաս հազարամեղր հեռի է անտի եւ է
այժմ սահմանագլուխ Օսմանեան, Ռուսա-
կան եւ Պարսկական պետութեանց, անսա-
սան կոթող կանգնուած ի կիցս այդ երեք
տէրութեանց հողերուն. եւ թերեւս մէկ
տէրութիւն չէ կարող պարունակել Մասիսի
անբաւութիւնը, փառքն եւ վեհութիւնը:
Արարատայ բնական երեւոյթէն ի զատ քա-
ղաքական ուրիշ երեւոյթ մը եւս ընդ ա-
ռաջ կ'ենէ Վանէն Պայազիտ երթացողին:
Զի կը պատահի յանկարծ Պարսկական հողի
որ լեզուի պէս երկնցած է Օսմանեան հո-
զին մէջ որ ունի տարածութիւն իբր 16
հազարամեղր երկայնութեամբ եւ 10 լայ-
նութեամբ: Կը տեսնես պարսիկ գիւղեր,
պարսկական տուններ, պարսիկ ընտանիքներ
եւ օտար երկրի մը բացորոշ հանդամանը-
ները. եւ քիչ վերջ կ'ենես այդ օտար հո-
զէն դարձեալ եւ կը մտնես Օսմանեան եր-
կիրը. թէ՛ ելքն եւ թէ՛ մուտքը աղատ է
անցագիրի կամ այլ ինչ պահանջներէ. զի
կ'ըսուի թէ տալիսին ճշդուած չէ պաշտօ-
նապէս Օսմանեան եւ Պարսկական սահմա-
նագիծերն եւ նոյն լեզուն անորոշութեան
մէջ է: Պէտք է խոստովանիլ սակայն թէ

թուրքիացի մը հեղձամղձուկ կը լինի նոյն փորձածաւալ տարածութեան վրայ օտար օդ չնչեղով :

Աւելի իւր պատերազմական արկածներով քան այլ հանգամանօք համբաւեալ Պայազլիտ քաղաքը, վերջինն քաղաքաց թուրքիոյ իւր արեւելեան հիւսիսային սահմանածայրին վրայ, ուղեւորին համբերութիւնը կ'սպառէ այնչափ որ ծածկուած է ձորերու, լեռնակներու, բլուրներու եւ դերբուկներու ետեւ իբր քանի մը վարագոյներու ետեւ : Առաջին տեսիլն որ հանդէպ կ'ենէ իւր այցելուին, չրճակայ բազմադունակ լեռներն են որ իրենց երփներանգ գոյներով զանազան հանքերու ծածկարան լինելն բացորոշ կը յայտնեն . գունաց այսքան խայտաճամուկ զանազանութիւն մը դուն ուրեք կ'երեւի այնքան անձուկ տեղով մը մէջ : Բայց դժբաղդաբար ո՛ւր են բնական այդ հարստութենէն օգտուելու ջանքեր ... ի զուր կը մնան անդ հողին ներքեւ այնքան հանքեր :

Ներկորդ տեսիլն որ առաջնոյն հաւասար կամ զինի կը գրաւէ ուղեւորին ուղադրութիւնն ի Պայազլիտ, դեռ այն ինչ փլատակաց դիզադէզ աւերակաց տխուր եւ ողորմելի երեւոյթն է որ զքաղաքն նմանցուցած է ամայութեան անապատի մը, ունենալով իւր մէջ իբր Ովասիս իրարմէ յաւէտ կամ նուազ հեռի, մերթ եւս իրց, սակաւթիւ նորակերտ տուններ : Զիք ինչ աւելի կենդանի նշան պատերազմական աղէտից քան այս քաղքին երեւոյթը, որ յուշ կ'ածէ մարդկան այն դարեր յորս զօրութիւն, մեծութիւն եւ փառքն զօրաբանակաց կը կայանար քաղաքաւերմանց, մարդակոտորմանց եւ երկրաքանդմանց յովովութեան վրայ : Կը թուէր ինձ լինիլ Նուամանիոյ, Սագունտոնի, Կարքեդոնի եւ աւերմանց դարերուն մէջ երբ ի Պայազլիտ էի :

Բայց Պայազլիտ դեռ կենդանի է, զի ունի տակաւին 400 տուն բնակիչ (վերջին պատերազմէն առաջ 1500 էր) եւ իւր կենդանութիւնը կը պարտի իւր աշխարհադրական դրից նպաստաւորման ի վաղընդփոյթ կանգնում եւ ի բարգաւաճում, ըստ որում ուսական եւ պարսկական սահմանադրութիւններէ 10 ական հազարամեր (իբր 2 1/2 ժամ) միայն հեռի ի-

նելով անդադար եւ դիւրին հաղորդակցութեան մէջ է ընդ նոսին եւ այդու առեւտրական մեծ շարժում ու գործողութիւններ ունի : Արդարեւ Պայազլիտ հասարակաց քաղաքի մը կը նմանի, ոչ մի ազգի կամ ժողովուրդի մասնաւոր տիպ կամ յատկանիշ ունի . աններդաշնակ խառնուրդ մի է թրքական, հայկական, քրդական, ռուսական, պարսկական, արաբական եւ թաթարական տիպերու, սովորութեանց, տարազուց եւ եւ : Բնակիչներն գիտեն խօսիլ գրեթէ մեծ մասամբ այդ բոլոր լեզուներն բացի վերջին երկուքէն եւ Հայք մասնաւորապէս կը խօսին իբր մայրենի լեզու : Արարատեան եւ Արեւմտեան (թրքահայոց) բարբառներն միանգամայն կազմելով երկուքն այնպիսի խառնուրդ մը որ ոչ երբեք հաւասարապէս հաճելի կ'ընայ լինիլ Նրեւանցիին եւ Կարնեցիին : Զի ուսահայն մինչ միավանկ բայերու ներկայն է՝ կը լծորդէ, գալէ, լալէ, եւ, Պայազլիտիք կ'ըսեն լալա՛մ, գալա՛մ եւ : մինչ թրքահայն սեռի խնդիրներ կը գործածէ սովորապէս հայցականով, սոքա սեռականն ունին ընդհանրապէս ի կիրառութեան : Բազում են այս տեսակ աղաւաղութիւնք :

Պայազլիտի հողին հանքային բազալտութիւնքը զրկած են զինքը տունկերէ, երկրի մակերեւոյթին այդ գեղաշնորհ վարսերէն, բայց մերձակայ Պարսկաստանը եւ ուսական Նրեւանն կը հայթայթեն իւր բոլոր պտուղները եւ խաղող եւ ընդեղէնքը : Ուստի լերկ երեւոյթ մ'ունի, անհաճոյ աչաց ի տեսիլ եւ արուեստական գեղեցկութիւնք չկան որ բնականին պակասը լրացնեն : Իւր գլխաւոր յիշատակութեան արժանի մեծ ու միակ փառաւոր շէնքն է միջնաբերդ դըլեակն կամ ձմերոցն, արդարեւ գործ հոյակապ եւ ամրակուռ : Այդ շէնքը թէպէտ ձմերոց մի է զօրաց հանդերձ ամեն կարեւորներով, բաղանիք, աղօթատեղի, աղբիւր ջրոց, շտեմարան արմտեաց եւ եւ, բայց եթէ բերդ կամ դղեակ կը կոչուի, պատճառն այն է զի է յոյժ բարձրակառուց, յոյժ ամրաշէն, համակ բարակերտ եւ բնական ժայռի հաւասար տոկուն : Զի քանի՛, քանի՛ պաշարումներ տեսած է, բայց բիւրաւոր դնդակներէ եւ ումբերէ անսասան մնացած է : Դեռ մոռցուած չէ իւր վերջին

պատերազմին ժամանակ կրած պաշարունակն եւ ցվերջ դիմադրութիւն թնդանօթի հարուածոց ու ուժոց : Այս դղեակ-ձմերանոցի արտաքին չքեղ տեսքը , մանաւանդ զի վերագոյն է դիրքով քան քաղքի մակերեսութիւն , ի հեռուստ դիտողաց կ'երեւցնէ զՊայազիտ սքանչելատեսիլ քաղքի մը նման դեղեցիկ , եւ բոլոր պատկերներ որ կը ներկայեն զայս քաղաք զանազան գրեանց մէջ , այդ ձմերոց-դղեակի տեսքովն գեղազարդեալ են : Դղեակին մզկիթն ու մանաւանդ աշտարակն (մինարէ) լրումն ու պլասակն է նոյն շէնքին գեղարուեստական ճարտարութեան : Վերջնոյն բարձրութիւնն գաւառին եւ դաշտային մակարդակէն չէ ինչ պակաս քան 5000 ոտք : Սորա գլուխը նստելով Խազախք ունիւր պաշտպանեցին գլխաւորապէս զդղեակն 1877 ի մեծ արկածէն , զի գնդակահար կը տապալէին ամէն մահկանացու որ յանդգնէր երեւան ելնել : Եւ աշտարակն ինքն ալ կը կրէ ռումբերու հետքեր , բայց բուրգերու յատուկ ուժգնութեամբ տոկալով տոկացեր է եւ դեռ կրնայ դիմանալ երկար դարեր : Այդ մեծագոյն ձմերանոցն շինուած է Փահլիւչիաշայի նախնիքներէն , Պայազիտի նախկին աւատապետներէն , ոյց սերունդը կը մնայ դեռ :

Կարնոյ կուսակալութեան ներքեւ դաւառ է (միւլթէսարիֆութիւն) Պայազիտ եւ ունի ընդ իշխանութեամբ Գարա-Քիլիսէ , Ալաշկերտ , Տիատին , Խամուր ու Անթափ գաւառակներն (գայմագամութիւն) : Սորա ամէնն ալ հաղորդակցութիւն ունին իրարու հետ հեռագրութելերով եւ թղթատարութեամբ , թէպէտ հազիւ 4-7 ժամ հեռաւորութիւններ ունին : Ամբողջ գաւառին գլխաւոր արտագրութիւնն է արմտիք եւ խաշինք : Վերջինով գլխաւորապէս Քուրդք եւ առաջինովն Հայք կը զբաղուին , ինչպէս Ասիական-Թուրքիոյ գրեթէ մեծ մասին մէջ :

Հայոց թիւն է ի Պայազիտ քաղաքի 150 տուն մի եկեղեցիով , Ա. Կարապետ անուն , որ չէնքի տգեղութեան եւ խախուտ կաղմութեան տիպար կրնայ համարուիլ : Ծիրանաւոր անուն եկեղեցի մը կայ լեռնային պառիկի մը վրայ , այժմ անչէն եւ կէս աւերակ : Քաղաքացի Հայերն զրեթէ ամբաղջապէս առեւտուրով կամ արհեստով կը

զբաղուին , եւ են գլխաւոր պատճառք երկրին տնտեսական կենդանութեան եւ ելմտական շարժման , որ կը կատարուի թուրքական , պարսկական եւ ռուսական դրամներով միանգամայն , վերջինէն թղթադրամներ ալ կը գտնուին ի շրջաբերութեան այս քաղաքին մէջ յոյժ անհամեմատ առատութեամբ քան Թուրքիոյ ներքին բոլոր գաւառաց մէջ :

Պայազիտի ենթակայ Հայաքնակ զիւղեր չորս են միայն , Արծափ 40 տուն , Քօրուն 12, Մուռն 28, Սարըպեղ 9: Առաջին զիւղն իւր անունը կը պահէ դարերէ հետէ եւ նշանաւոր է արաբական արշաւանքին ատեն իւր քով տեղի ունեցած նշանաւոր ճակատամարտի մը պատճառաւ :

Հարկ չէ ասել թէ Պայազիտ ունի խիստ առողջարարար կլիմայ եւ պատուական ջուր , զի է սահմանակից երկնադրացի Մասիսին :

1885 Մուշ

ՄԱՐԿՈՍ ՆԱԹԱՆԵԱՆ

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Ց Ո Ւ Ր Տ Ը

Մարդուս սքանչելի կազմութիւնը թոյլ կուտայ իրեն զիմադրել ծայրայեղ ցուրտի որպէս եւ տաքի : Յառաջ բերենք քանի մը թուանշաններ , որք ցոյց կուտան թէ միւսնոյ ցեղէ մարդիկ ունանք կրնան դիմանալ տարբեր բարեխառնութեանց որք ապուլթիւն եւ զարմանք կը պատճառեն եւ որք անտարակոյս պիտի սպաննէին արարչագործութեան ուրիշ էակներն ողջոյն :

Անցեալ հոկտեմբեր ամսուն , անգլիական եւ ռուս պատուիրակներ , որք Մէրուշաք հաւաքուած էին Աֆղանստանի սահմանագլխոյց գծման համար , կը նշանակէին Ֆարէնհայթի — 4⁰ (— 20⁰ Հարիւրաչափ) ցուրտ մը եւ այս ցուրտ չափաւոր կը նշկատուէր : Գանատայի մէտէորաբանական Յանձնախմբին հրատարակած պաշտօնական ցուցակներուն նայելով , վերջին տարիներս ամենէն սաստիկ ցուրտը տիրած է 1875 ին ի Բեմպրոք , վերին Ուղաուէի մէջ , ուր ջեր-

մաշափն իջաւ մինչեւ—42⁰ հարիւրաչափ (1) :

Հիւսիսային Ամերիկայի մէջ կը յիշուին աւելի սաստիկ ցուրտեր . այսպէս, Պէք նաւապետն Ֆոսդ-Րիչայընսի մէջ — 56⁰, 74 հարիւրաչափ ցուրտի մը խօսքը կ'ընէ : Եւրոպեաց (Սիպրիիս) կը համարուէր աշխարհիս ամենէն ցուրտ բնակավայրն, եւ իրաւամբ, որովհետեւ ամբողջ տարւոյն միջին բարեխառնութիւնը կը տատանի 0 աստիճանի շուրջն, եւ յունվար ամսոյ ցուրտը կ'իջնէ մինչեւ — 45⁰ : Բնագիտական երեւոյթներն, հողերու եւ ծովերու բաշխման մէջ տարբերութիւնները կարեւոր դեր մը կը խաղան որ քանի մը տարի առաջ ի նկատ չէր առնուեր կլիմայական պայմանաց մէջ : Այսպէս, Եւրոպեաց Էտիմուլերկէն 6 աստիճան աւելի դէպի հիւսիս է եւ Նոր-Չէմպլոյ կղզիներն, Արջային ովկիանոսին մէջ, լայնութեան 75 աստիճանին վրայ, աւելի բարձր միջին բարեխառնութիւն մ'ունին, չնորհիւ Կըլֆ-Սթրիմի զոր այնքան լաւ ուսումնասիրած է Մաուրի հրամանատարը, Միացեալ Նահանգաց գիտական փառքերէն մին : Այդ տաք ջրոյ հոսանքն, անդադար նորոգելով, զգալի կը լինի մինչեւ այդ վերին լայնութեանց մէջ : Կ'երեւի թէ կայ բնակավայր մը ուր ցուրտն աւելի եւս ուժգին է, Վէրքօեանսը, աւելի բարձր լայնութեամբ՝ 67 աստիճանի վրայ, ուր ջերմաչափն իջած է մինչեւ — 55⁰ Հարիւրաչափ, անցեալ յունվար ամսուն :

Աշխարհաօդայիններն, նաւարկուներն, որք անզուտ եռանդեամբ կը պտըտին անպատ երկիրներն եւ մշտնջենական սառույցներով ծածկեալ ծովերն, ենթարկուած են աւելի խիստ ցուրտերու :

Ամենասաստիկ ցուրտն, որուն վրայ կը խօսի Նորտէնսթրիւտ իւր վերջին ուղեւորութեանց միոյն մէջ, էր — 47⁰, 7 Հարիւրաչափ :

Կրկի տեղեկան, իւր ուղեւորութեան մէջ որ այնքան աղետալի կերպիւ վերջացաւ, կը պատմէ թէ Տիսքովրի-Պէյի մէջ երկար բնակութեան մը միջոցն, բարձրագոյն բարեխառնութիւնը չանցաւ երբէք

+ 52⁰ Ֆահրէնհայթ եւ ջերմաչափն ամենէն ցուրտ օրերուն իջաւ — 66⁰ Ֆահրէնհայթ, այսինքն 118⁰ ի տարբերութիւն մը : Պ. Մարդէն, արեւելեան Սիպրիոյ մէջ ճանբորդելով, կը պատմէ թէ 1882 նոյեմբեր 28ին, 59 աստիճան լայնութեան եւ 152 աստիճան երկայնութեան ներքեւ, արձակ օդին դրուած ջերմաչափը կը նշանակէր 50⁰ 1/2 Բէմսլեր, այսինքն իբր — 63⁰ Հարիւրաչափ . եւ կրնամ հաւատօտել, կ'ըսէ Փարիզի Աշխարհագրական Ընկերութեան ուղղեալ նամակի մը մէջ, թէ այս թիւերը ճիշդ են, որովհետեւ երեք ջերմաչափ կը գործածէի ճշդութեան համար : Նոյեմբեր ամէն իսկ, Անգլիացւոց ձեռնարկած բեւեռային վերջին ուղեւորութեան, ժամանակ ջերմաչափը կ'իջնէր — 80⁰ Հարիւրաչափ ի Ֆորթ Րէ, Գերալդ մեծ լճին մօտ : 1883 յունվար 23ին, — 65⁰ Հարիւրաչափ կը նշանակէր Վաշնգտօն շրջանաւոց մէջ, որք սառույցներէ պաշարուած էին ի Փարայի ծովը, Վայկացի նեղուցին արեւելակողմը :

Մարդուս կրած ամենաստիկ ցուրտը թուի լինիլ այն օրուն վրայ կը խօսի Պ. Կիլտըր, լրատու Նիւ - Եորք Հէրալտի եւ իբր այն ուղեկից այն արշաւանաց որում ձեռնարկուեցաւ փնտռելու համար Ֆրանսիայի, ընդ հրամանատարութեամբ Շվաբքա տեղակալին : Պ. Կիլտըր իւր լրագրին ուղղած նամակաց մէջ խօսելով 1879 — 1880 ի ձմրան վրայ որ մեր կլիմայից մէջ իսկ այնքան սաստիկ եղաւ, ինչպէս կը յիշուի, կը յիշատակէ ցուրտ մը, — 103⁰ Հարիւրաչափ զոր հարկ է յարել վերջէն կ'իջեցնէ — 71⁰ Հարիւրաչափի : Այս թուանշանք արտատըպուած են բազմաթիւ լրագրիներէ եւ հանդէսներէ, եւ նոյն իսկ Շվաբքա ներկայած է զայնս Նիւ - Եորքի Աշխարհագրական Ընկերութեան մէկ նստին մէջ, Այսչափ սաստիկ ցուրտ մը անծանօթ է ցարդ եւ դժուարաւ կ'ընդունինք զայն իբր անկեղծ, մանաւանդ երբ ի նկատ առնունք Պ. Քլըսդշաքի դիտողութիւններն որ նաւուն մէջ կը կատարէր խոհարարի եւ մէտէորագէտի երկու կարեւոր պաշտօններն : Կը ծանուցանէ մեզ թէ ամենէն սաստիկ ցուրտն, զոր իւր ընկերք եւ ինք կրեցին 1880 յունուար 3 ին առաւօտեան ժամ 6 ին, էր — 57⁰ Հարիւրաչափ : Ընդունելով այդ վերջին թիւն որ

(*) Յիշենք թէ անգիլիկ սառուցումը կ'սկսի 39⁰ Հարիւրաչափին : Աւելի միայն կը դիմանայ աւելի սաստիկ ցուրտերու :

որ աւելի ճիշդ կ'երեւի մեզ, ստոյգ է թէ սպլտակ տեղէ մարդիկ կրցած են դիմանալ հինգ ամսոյ չափ, 1879 նոյեմբերէն 1880 մարտի վերջը, 40⁰ էն 50⁰ Հարիւրաչափ ցուրտի, եւ այս՝ առանց անոնցմէ մին մեռնելու կամ ծանրապէս հիւանդանալու:

Ամերիկացիք ընդունած էին իրենց ընկերացող իննուհինգըուն ապրելու եղանակը: Անոնց նման կը սնանէին լիտկերու եւ ծաւերու հում միսով, մեծ քանակութեամբ իւղոտ եւ ճարպային նիւթեր կուլ կուտային, այսու զերծ մնալով ըտապարութենէ որ այնքան ցաւալի կոտորածներ կ'ընէ այդ կողմերն յաճախող կիտորաց մէջ: Առաջին օրէն իսկ թողած էին իրենց վրանները եւ հողին տակ ձիւնին ներքեւ կ'ապրէին: Վերջապէս կը հազնէին մի միայն հիւսիսային եղջերուի մորթէ հանդերձներ որը կ'արգելուէ և է արտաշնչութիւն:

ԶԱՆԱԶԱՆՔ

ԳԱՐԱՏԱՂԻ ԻՇԽԱՆԸ

Գարատաղի իշխանը, Նիգոլա Ա. Բէդրովովիչ Նիէկովս, որ վերջերս այցելեց եւրոպական մեծ տէրութեանց մայրաքաղաքներն եւ տեսակցեցաւ կայսերաց եւ դիւանապետաց հետ, ընդհանուր ուշադրութեան առարկայ եղած է այժմ: Իւր ուղեւորութեան նպատակը թէեւ ծանօթ չէ, սակայն քաղաքական պատճառաց կը վերադուրի: Ինչ որ ալ լինի, ապագային թողլով լուսաւորել այդ միջին կէտ, աստ հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք փարիզեան թերթէ մը այդ երիտասարդ համակրելի իշխանին վրայ որ Ֆրանսայի մէջ մեծցած այնքան մեծ համակրութիւն կը վայելէ ի Ֆրանսա:

« Գարատաղի իշխանն ուրբաթ առաւօտ Նիսէն Փարիզ հասաւ եւ Օթէլ Գոնդինանդալ իջաւ, ճիւղբովիչի կոմս անուան ներքեւ: Իրեն կ'ուղեկցին վեց անձինք, որոց մէջն է իւր թիկնապահն, Պ. Նիգոլա Մադանովիչ: Թէեւ ծալտեալ կ'ուղեւորի, իւր գալտեան լուրն անմիջապէս տարածուեցաւ:

« Նիգոլա իշխանն հազիւ քառասուն շորս տարեկան է: Բարձրահասակ, պնդակազմ, գլուխն ուղիղ բռնած, դիմաց գոյնն արեւակէզ, երեսին արտայայտութիւնն ազդու, աչերը տարօրինակ կերպիւ փայլուն, վեհաուք իւր ազգային տարազին մէջ, թուի մարմնացնել յանձին զօրութիւն, քաջասրտութիւն, պատերազմ: Այդ գեղեցիկ եւ գոռոզ հազուստն, որ այնքան լաւ փայլ մը կուտայ իւր զիւցաղնական դէմքին, իշխանը չհազնիր զայն ի Փարիզ:

« Իւր հօրեղբոր, Տանիլօ առաջնոյն մահուանէն յետոյ ի գահ բարձրացաւ 1860 օգոստոս 14ին եւ 1883 ի ամսուէն ի վեր Փարիզ եկած չէր: այլ մեր մէջ մեծցած է, Լուի-լը-Առան լիկէոնին մէջ եւ իւր նըրբամտութեամբ, ճաշակով, ձեւերով, Ֆրանսայի սիրով, մերիններէն է, Փարիզցի մնացած է: Լուի-լը-Առան լիկէոնին մէջ իւր հօրեղբորորդւոյն, Պ. Ռատովիչի հետ էր, այսօր իւր արտաքին գործոց նախարարն:

« Մտացի եւ ժրաջան ուսանող մ'էր, այլ պատմական եղած է իւր Ֆիզիքական ուժով, ճարպիկութեամբ, քաջասրտութեամբ եւ ընտիր ընկերով բարեմասնութեամբ: Անոնք որ պատին ունեցած են անոր հետ մի եւ նոյն նստարաններուն վրայ նստելու, յարգանք եւ աղապատանք կը խօսին մինչև ցարդ, մինչդեռ քառորդ դար մը սահած գնացած է:

« Գարատաղի դահուն վրայ, իրագործած է այն յոյսերն զորս կը ծնուցանէր Լուի-լը-Առանի փայլուն ուսանողն: Նախ, ինքզինքը սիրցուցած է իւր հպատակաց, որ առաջին կէտն է իշխանի մը համար որ կ'ուղէ լաւ ծառայել իւր հայրենեաց: Իւր վէս եւ խիզախ լեռնականները պատրաստ են իրենց կեանքը զոհել անոր համար: Յետոյ անդու անդադար, լուի մննջիկ աշխատած է Գարատաղի զարգացման համար: ուղիներ բացած է, երկաթուղի շինած է, դպրոցներ հիմնած է, եւ նպաստաւորած է երկրագործութիւնն, ճարտարութիւնն եւ առեւտուրն:

« Թէ եւ Ֆրանսայի սիրող, Նիգոլա իշխանն անձուկ կապերով կապուած է Ռուսիոյ: Յոյժ համակիր էր Ալէքսանդր Ի. կայսեր որ իբր իւր գաւազն կը նկատէր զայն:

Մոլեռանդ սիրով կը սիրէր զԿայսրն եւ այդ նահատակին ահռելի մահուան լուրն առնելով իւր վիշտն յայտնեյ այնպիսի պերճախօս շեշտերով զորս հարկ էր հաւաքել իւր եղբւրջական սքանչելի բանաստեղծութիւն մը։ Ալէքսանդր Գ. իւր հօրմէն ժառանգած է կատարեալ համակրութիւն մը Նիգոլա իշխանին համար։ Հրասպարակաւ ցոյց տուած է զայն հանգուցեալ Կայսեր յուզարկաւորութեան եւ իւր իսկ թագադրութեան ժամանակ։

« Կը յիշեմ թէ տեսած եմ Նիգոլա իշխանն Ալէքսանդր Գ. ի թագադրութեան ատեն, ի Մոսկուա։ Հագած էր իւր ազգային տարազն, ոյր դօտին զարդարուած էր փողփողուն դաշլոյներով։ Արքունի պահպան զօրաց մեծ հանդէսին ժամանակ, սքանչելի էր իւր նժոյգին վրայ, որ թափր կը հատանէր իբր նետուելու համար ճակատամարտի մէջ. ամեն աչեր կը դառնային դէպի իշխանն, Սեւ Լերանց դիւցազնըն։ Երբ Մոսկուայէն մեկնեցաւ, իրեն կ'ուղեկցէին քաղաքին կառավարիչ իշխան Տոկոբուքի, Կայսեր թիկնապահն եւ ուրիշ բարձրաստիճան անձինք։ Շոգեկառք մը տնելով, անոնց ուղղեց Քրանսերէն փոքրիկ ճառ մը, որ լի էր ջերմագին զգացմամբ։ Ալէքսանդր Գ. ի եւ Ալէքսանդր Գ. ի համար, որոց անուններն յօդեց իւր բերնին մէջ, որպէս կը յօդէ զայնս իւր սրտին մէջ։

« Այդ դիւցազնը միանգամայն դիւանագէտ մը։ Ձէթինիէի և Պոլսոյ միջեւ անցած դարձած քաղաքականութիւնը դիւանագիտական հրաշակերտ մ'է . . . :

« Նիգոլա իշխանն իւր հայրենեաց տըռած է ուրիշ դիւցազն մը, անդրանիկ աղջիկն ամուսնացնելով Բէդրօ Քարաեորկէվիչ իշխանին, որդի Սերայիոյ տիրող նախորդ իշխանին, համեստ դիւցազն որում պարտական է Ֆրանսա։ Նախկին աշակերտ Փարիզի զինուորական Սէն-Սիր վարժարանին, Քարաեորկէվիչ իշխանը Քրանսական բանակին մէջ մտաւ իբր պարզ զինուոր, դերմանական արշաւանաց ժամանակ. զինուոր գրուեցաւ իւր երկու եղբորորդւոց հետ, մին տասն եւ ութ եւ միւսը տասն եւ ինն տարեկան. այդ երկու տղայք իւր քով մեռան, Ֆրանսայի թշնամեաց գնտակներուն ներքեւ, մին ճակտէն և միւսը սրտէն զար-

նուելով. եւ նա շարունակեց իբր պարզ զինուոր կռուիլ մինչեւ վերջին օրն, հար իւր անգամ վտանգի ենթարկելով զանձն Ֆրանսայի համար որ ընդունած էր զայն իւր աքսորանաց միջոցին։ Քաջութեան հըրաշներով, իշխանն հասաւ օժանդակ գընդապետի աստիճանին։»

ՀԱՍԿԱՔԱՂ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԱՌԱՋԱՐԿԵԱԼ ԽՆԴԻՐՔ

ԹԻԻ 6. (Մ... ԹԻԻ 3798)

» 14. » » 3806)

» 15. » » 3807)

» 16. » » 3808)

Խ Ն Դ Ի Բ Թ Ի Ի 12

Լ ՈՒԾՈՒՄ Ն

Ք կոչենք կնոջ խակական տարիքն եւ ք երկուսին տարիքներու տարբերութիւնը։ Որով,

Ք — ք կը լինի ամուսնոյն տարիքը,

Ք — 2 ք կնոջ կեղծ տարիքը, եւ

2Ք — ք երկու տարիքներու գումարը։

Ուրեմն խնդրոյն առաջին մասին համաձայն կ'ունենանք.

$$(\text{Ք} - 2\text{ք}) + (\text{Ք} - \text{ք}) = (2\text{Ք} - \text{ք}) \frac{9}{10} - 3,$$

$$\text{յորմէ } \text{ք} = \frac{2\text{Ք} + 30}{21}$$

ք ի սոյն արժէքը փոխադրելով իրեն տեղ կը գտնենք.

$$\text{Ք} - \frac{2\text{Ք} + 30}{21} = \frac{19\text{Ք} - 30}{21} \text{ ամուսնոյն տարիքը}$$

$$\text{եւ Ք} - \frac{4\text{Ք} - 60}{21} = \frac{17\text{Ք} - 60}{21} \text{ կնոջ կեղծ տարիքը}$$

Վերջապէս խնդրոյն երկրորդ պայմանին համեմատ կ'ունենանք.

$$\left(\frac{1}{7} \times \frac{19\text{Ք} - 30}{21}\right) \left(\frac{2}{9} \times \frac{17\text{Ք} - 60}{21}\right) = \text{Ք}$$

Երկրորդ աստիճանի հաւասարութիւնը յորմէ կը հանենք Ք = 48 տարի, որով եւ ամուսնոյն տարիքը կը լինի 42։


ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Ս. Յ. Յ.

Գատը գիւղ.

ԽՆԴԻՐ ԹԻԻ 13

Լ ՈՒԾՈՒՄ Ն



Արդարեւ ճ Մ Յ և Ն կէտերը երկրեկու կը գտնուին քառակուսւոյն հանդիպակաց կողերուն մէջ տեղէն բարձրացած ուղղահայեացներուն վրայ որք Յ կեդրոնէն կ'անցնին և միմեանց ուղղաձիգ են . յայտնի է նաեւ որ յիշեալ կէտերը Յ կեդրոնէն հաւասարապէս հեռի են :

ճ Մ Յ Ն պատկերը քառակուսի մ' է հետեւաբար : Սոյն քառակուսւոյն տարածութիւնն ունենալու համար ($\approx$ ինկելով Ա Բ Գ Դ-ի կողը) հաշուենք ճ Յ անկիւնագիծը որ կը բաղկանայ հաւասարակոշ եռանկեանց բարձրութեան կրկինէն եւ աւելի $\approx$ է : Արդ եռանկեանց բարձրութիւնն

հաւասար է $\frac{\sqrt{3}}{2}$ ի, ուրեմն .

$$\text{ճ Յ} = \approx (\sqrt{3} + 1)$$

Նոյնպէս յայտնի է թէ քառակուսւոյ մը

անկիւնագիծին վրայ իբրեւ կող շինուած քառակուսին հաւասար է նախորդին կըրկնոյն, ուրեմն $\approx (\sqrt{3} + 1)$ ի քառակուսին առնելով որ է $\approx^2 (4 + 2\sqrt{3})$ սորա կէտը $\approx^2 (2 + \sqrt{3})$ կուտայ ճ Մ Յ Ն քառակուսւոյն տարածութիւնը :

Դիւրին է ստուգել թէ այս տարածութիւնը հաւասար է Ա Բ Գ Դ քառակուսւոյն տարածութեան կրկնոյն, աւելի չորս եռանկեանց տարածութեանց գումարին :

ԱՆՈՒԱՆՔ ԼՈՒԾՈՂԱՅ

Տ. Ս. Յ. Յ.

Գատըգիւղ

Տ. Ներսէս Յակոբեանց . ի Դաւրէժ . — Ձեր թիւ 40 եւ 41 խնդրոց լուծումներն ուղիղ են :

Ա Ձ Դ Ա Յ Ի Ն

Մեծաւ տխրութեամբ կը ծանուցանենք թէ Կիւլպէնկեան բարեհամբաւ Գերդաստանին պետ Սերովբէ Էֆէնտի այս երկուշաբթի իրիկուն Գատը գիւղի վերջին շոգենաւուն մէջ յանկարծամահ եղաւ :

Հանգուցեալն ծնած է 1833ին ի Թալաս (Կեսարիա) : 1846ին երուսաղէմ գնաց : 1847ին, տակաւին 13-14 տարեկան հասակին մէջ պանդխտելով ի Կարին, առեւտրական գործոց մէջ մտաւ, յորս իւր աշխատութիւնք զարմանալի յաջողութեամբ մը պսակուելով, Փոքուն Ասիոյ հետ ամենամեծ վաճառականութիւնն ընող Վաճառատան մը պետն եղաւ իւր մեծ գործունէութեամբ, ճարտարութեամբ, խնայութեամբք և ուղղամտութեամբ :

Սերովբէ Էֆէնտի ունէր Դ. կարգի Մէճիտիէ և Դ. կարգի Օսմանիէ պատուանշաններ : Անդամ էր Կ. Պոլսոյ Առեւտրական Սենեկին :

1874ին Էնկիւրիի սովելոց Յանձնախմբին անդամ եղաւ : 1880ին Ատենայետ եղաւ Հայաստանի սովելոց Կեդրոնական համալսարանի Յանձնաժողովոյն, որ հրաշքներ գործեց :

1869ին անդամ նշանակուած էր Կեդր. վարչութեան Խառն Ժողովոյն . բայց պաշտօն չէր վարած : 1878էն ի վեր անդամ էր Աղգ. Հիւանդանոցի այժմէն բաերջան և արդիւնաւոր Հոգաբարձութեան, զոր երկու վարչութիւնք երկիցս վերահաստատած են իւր պաշտաման մէջ, Անդամակցած է նաև Երուսաղէմի Պարտուց բարձման Յանձնաժողովոյն : 1873էն ց 1875 Ատենայետ եղած է Գատըգիւղի Թաղ. Խորհրդոյն : 1870էն ց 71, անդամ իւսկիւտարի Ս. Խաչի Թաղ. Խորհրդոյն :

Իւր Սարգիս եղբոր հետ հիմնած է Թալասի աղջկանց վարժարանն, որ միշտ ունի 100է աւելի աշակերտուհի, և 22

տարիներէ հետէ կը հոգար այս կըրթական հաստատութեան ծախքերն : Իւր հայր արդէն հիմնած էր Թալասի արական վարժարանը :

Սերովբէ Էֆէնտի 1852ին ամուսնացած է, եւ ունի 4 մանչ և 2 աղջիկ զաւակ : Վաճառականութեան մէջ իւր զաւակունք իրենց հօր գովելի ընթացքին հետեւող եղած են :

53 տարեկան հասակի մէջ Սերովբէ Էֆ. ի մահը շատ յանկարծական, շատ վաղահաս հարուած մ'է հայ վաճառականութեան, որոյ ամենափայլուն գոհարն ինք էր թերեւս, եւ ընդհանուր հայ հասարակութեան, յորում իւր ազգասիրութեամբ, բարեգործութեամբք եւ ուղղամտութեամբ եղական համբաւ մը կը վայելէր : Բայց իւր մահը պիտի ոյբայ ո'չ միայն Կ. Պոլիս, ո'չ միայն իւր հայրենի գաւառ՝ Կեսարիա, այլ Փոքուն Ասիոյ գրեթէ ամեն գաւառ. զի ամենուրեք հարիւրաւոր անձինք բազում տարիներէ հետէ կ'ապրէին իւր ընդարձակ գործառնութեանց շնորհիւ : Ս. Փրկչի Որբանոցը բարեգործ հայր մը կը կոչուանէ. Աղգ. վարչութիւնն ալ լրջամիտ և աղղեցիկ անդամ մը . զի Սերովբէ Էֆէնտի անդամ էր Բաղաքական արդի Ժողովոյն, եւ համայն Աղգն իւր ամենէն արժանաւոր և ամենէն արդիւնաւոր զաւակներէն մին կը կոչուանէ յանձին Սերովբէ Էֆէնտիի Կիւլպէնկեան :

ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՍԵՐՈՎԲԷ ԷՖ. ի Յուդարկաւորութեան տխուր հանդէսն կատարուեցաւ չորեքշաբաթի օրը, եւ օգին գէշութեան հակառակ, Ժողովրդային և ազգային մեծ ցոյցի մը կերպարանն ստացաւ :

Հանգուցելոյն մարմինն առաւօտուն իւր բնակարանէ, որ ի Մօտա-ճատտէ, փոխադրեցաւ գիւղին Ս. Թադաւոր եկեղեցին, Խուռն բողմութիւն կ'ընկերանար դադաղին : Խրիմեան Հայրիկ հանդիսաւոր պատարագ մատոյց :

Ժամ 4ին, Կամուրջէն մեկնեցաւ յատկապէս վարձեալ մեծ շոգենաւ մը,

յուզարկաւորները փոխադրելով ի Գառը գիւղ: Ասոնք ուղղակի Ս. Թադաւոր եկեղեցին գնացին:

Կրօնական պաշտամանց կատարումէն յետոյ, Ամեն. Խրիմեան Ս. Հայրիկ բեմն ելնելով, իւր բնական սրտայոյզ պերճախօսութեամբ դամբանական մը խօսեցաւ, որ քանիցս յարտասուս շարժեց ունկնդիրները, մանաւանդ երբ Հայաստաստանի Սովուն դառնաղէտ արկածից մէկ համառօտ նկարագիրն ըրաւ:

Ատենաբան Սրբազանն հանգուցելոյն նիւթական և բարոյական կենաց ներքողալից նկարագիրն ըրաւ: Յուցուց ի նմա բարեպաշտ Քրիստոնեայն, բարեգործ մարդը, արդիւնաւոր վաճառականն, աղքատէր Հայն, ողորմած մեծատունն և առաքինի Հայրն ընտանեաց, բարի օրինակ իւր որդւոց և նմանեաց: Այլ «Վասպուրականի Արծիւը» մասնաւորապէս սնդեց Սերովբէ Էփէնտիի նկարագրոյն վրայ իբրեւ Ատենապետին Հայաստանի Սովելոց Կեդրոնական Յանձնաժողովոյ: Հռչակեց թէ այսու պաշտամբ ո՞րակա թանկագին ծառայութիւններ առ Ազգն մատուցած էր ողբացեալն Կիւլպէնկեան: Պատմեց թէ ի՞նչպէս, Սովուն ահռելի ճգնաժամուն մէջ, երբ հազարաւոր թշուառներ յուսահատ ճիչեր արձակելով կը կորնչէին հայրենի աշխարհին մէջ, Կիւլպէնկեան հարիւրաւոր նամակներ ամեն սուրհանդակաւ կ'առաքէր իրեն (առ Խրիմեան), զորս ինք իբրեւ հազուագիւտ ինչ կը պահէ Վարազայ Թանգարանին մէջ, և թէ ի՞նչպէս անգամ մը Կիւլպէնկեան նամակ մը գրելով զիբրեւ Հայու զաւակ կ'աղաչէր իրեն որ Հայերուն լաւ նայի: Ճիշդ նոյն միջոցին որ Հայրիկը կը կարդար զայս նամակ, Հռիփսիմէ անուն Հայու աղջիկ մը ներկայանալով, կը յայտնէր վշտագին թէ իւր մայր մեռած է անօթութենէ և մանկիկ մը թողած է անխնամ: Հռիփսիմէ գրկած էր մանկիկին, որ նոյն միջոցին կը մեռնէր անօթութենէ, և խեղճ աղջիկը կ'աղաչէր զՀայրիկն որ կտոր մը կտաւ տայ՝ իւր փոքրիկ քոյրը պատելու և թաղելու համար: Այս տեսարան խորին տպաւորութիւն մը ձգած էր սրբազան բեմխոսացին մոտաց վրայ, որ զայն պատմած միջոցին լացաւ: Ն. Սրբազնութիւն սրտառուց բանիւք յիշեց այն մեծ ծառայութիւններ զորս Հայրենեաց մատուցած էր Սովելոց նախախնամական Յանձնաժողովը:

Հայրիկը դուռտեց հանգուցելոյն աղբատասիրութիւնն և յայտարարեց թէ այս դադաղ առաքինութեան դաս մը պէտք է լինի ազգայնոց: Վերջացուց օրհնելով Կիւլպէնկե-

եան բարեհամբաւ ազգօգուտ Գերդաստան: Թափօրն եկեղեցիէն դուրս ելաւ ժամն 5՝ անցած: Առջեւէն կ'երթային յամրաքայլ՝ Ոստիկանութեան և Թադապետութեան պաշտօնեայք: Յետոյ Ս. Փրկչեան Որբանոցին աշակերտք՝ գեղեցիկ ծաղկեայ պսակով մը. նմանապէս Որբանոցին աշակերտուհիք, սպիտակ հագած, ուրիշ գեղեցիկ պըսակ մը կը տանէին, սա արձանագրութեամբ. «Ա. Բարեբախտ Յ. Սերովբէ Էփէնտի Կիւլպէնկեան»: Յետոյ Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի Խնամակալութեան ծաղկեայ պսակը՝ կը տար: Ե. Պոսոյ Վաճառականութեան Սենեակը զրկած էր պսակ մը սա ֆըրանսերէն արձանագրութեամբ. «Ա. դոմէ Վաճառականութեան Սենեակը Ե. Պոսոյ, առաջացել աշխարհէն էրեւնի»: Կային պըսակներ՝ հանդերձ պատգամաւորութեամբ՝ ի դիմաց Վասպուրականի Հայոց, Սերաստիոյ Սենեքերիմեան Ընկերութեան և Սերաստիոյ Արամեան Վարժարանին, Ասիական Ընկերութեան, Թալասու վարժարանին զոր հանգուցեալն և իւր եղբայր հիմնած են, և ուրիշ աղքատին հաստատութեանց կողմէ, նաև Գառըգիւղի յոյն հասարակութեան կողմէ երկու խաչածեւ ծաղկեայ պըսակ, և պսակ մը հրեայ հասարակութեան կողմէ, ընդ ամենն երեսնի չափ:

Ասոնցմէ ետքը Կուգային դպիրք, քահանայք, վարդապետք, և Եպիսկոպոսունք՝ Խրիմեան Հայրիկը, Խորէն Նար-Պէյ Սրբազան, Սիմէոն Սրբազան և Ամեն. Ս. Պատրիարք Հայրն:

Հայ եկեղեցական դատուն կը հետեւէին երկու յոյն վարդապետք և երկու Հրեայ Բարսնիք, եւ յետոյ յոգնախուռն բազմութիւն ժողովրդեան:

Մարմինն յատուկ շողենաւով Գառըգիւղէն Սիրքէճի փոխադրուեցաւ և անտի յատուկ կառախուսքով Եփեմ Գուլէի Սղգ. Հիւանդանոցն ուր ամփոփուեցաւ Ս. Փրկչի մատրան քովի պարտիզին մէջ:

Արտօնատէր Կ. Ս. ԻիթիիճեԱն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ